Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

9(47.925)
P-82

1 SEP 2011 18 AUG 2006

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱՅԻ ԱՐՁԱՆԻՆ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ 3 ՅՈՒՆԻՍ 1904

ԾՐԱԳՐԵՑ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԵՑ
ՆՎԻՃԷ ԹՈՐՈՍԵԱՆ

La justice est la base
de tout gouvernement.



ԳԱՀԻՐԷ

Տպագրութիւն ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրի

1904

Photogravure et Typ Boehme & Anderer, Caire

92
Բ - 82

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱՅԻ ԱՐՁԱՆԻՆ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՒ

3 ՅՈՒՆԻՍ 1904

La justice est la base
de tout gouvernement.

ԾՐԱԳՐԵՑ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԵՑ

ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

ԳԱՀԻՐԷ

Տպագրութիւն ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրի

1904

19.04.2013
8245

ԶԵԿՈՅՑ

Ներկայ «Յիշատակարան»ի առաջին տպագրութեան վաճառման բոլոր հասոյթը՝ Եղիշէ Թոռոսեանի կողմէ Գահիրէի «Հայկական Աղքատախնամ Ընկերութեան» նուիրուած ըլլալով, իւրաքանչիւր օրինակ նոյն Ընկերութեան կնիքը պէտք է որ կրէ։

Երկրորդ եւ ուրիշ տպագրութեանց ամէն իրաւունք գործոյս հեղինակին վերապահեալ է

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ՀՍՍՀ Арм. ССР ИМ. А. МЯСНИКЯНА Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
(10260-58)
22226-59
4
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ՀՍՍՀ Арм. ССР ИМ. А. МЯСНИКЯНА Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ - NUBAR PACHA

1825-1899

ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ - NUBAR PACHA
1825-1899

ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ

1825 - 1899

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՍՆ Ա.

La justice est la base
de tout gouvernement.

Նուպար Բաշա 1825 ին Իզմիրի մէջ ծնած է. սերունդ Ղարապաղի Նուպարներու գերդաստանին, որոյ անդամներէն ոմանք հայկական վերջին հարստութեան անկումէն յետոյ, հայուն վիճակած տարագնացութեան հետեւանօք Իզմիր հաստատուած ըլլալու էին։

Ցոնիական այդ քաղաքը, ուր երբեմն Անիի գաղթականներէն ալ ստուար թուով հայեր ապաստանած են, նախորդ դարուն մէջ՝ կարեւոր Պետական հայ անձնաւորութիւններ տուած է Եգիպտոսին. ինչպէս Մուհամմէտ Ալի Բաշայի աջ բազուկը Պօղոս Պէյ Եուսուֆեան, Թագւոր Բաշա Ցակոբեան՝ որ գնահատելի ծառայութիւններ մատուցած է Փարաւոններու երկրին, Տիգրան Բաշա տ'Ապրօ՝ նախկին Արտաքին գործոց Նախարար Եգիպտոսի և Նուպարի անդրանիկ որդին Պօղոս Բաշա, որ զանազան կարեւոր պաշտօններ վարած է։ Ասոնց մէջ առաջին տեղեր կը գրաւեն Եուսուֆեան Պօղոս պէյ և Նուպար Բաշա։

Նուպար Բաշա ամբողջ կէս դարու հետ խօսող Նշանաւոր անցքերու և գործերու պատմութիւնով մը սերտօրէն կապուած է Եգիպտոսին հետ. այդ պատճառաւ անկարելի պէտի ըլլայ անոր կենսագրութեան լիակատար մանրամասնութիւնները սեղմեցնել ներկայ «Ցիշատակարանին» անձուկ էջերուն մէջ. ուստի՝ ատիկա վերապահելով յատկապէս հրատարակելի հատորի մը, որ մեր կողմէ պատրաստուած է ար-

գէն և յարմար ժամանակի մը հրատարակութեան պիտի տրուի. այս անգամ լայն գծերու մէջ ամփոփել պիտի ջանանք պետական այս հոյակապ անձնաւորութեան փայլուն գործերուն մէկ համառօտութիւնը միայն։

Ինչպէս ըսինք, Նուպար 1825ին ծնած է Իզմիրի մէջ, և բնատուր ուշիմութեամբ օժտուած, ծնողքը տեսնելով որ միջավայրին տուած ուսումը անբաւական է անոր զարգացմանը, Եւրոպայի մէջ դաստիարակելու գեղեցիկ ներշնչումը ունեցած են. և դեռ շատ մանուկ Նուպարը, ղրկած են հոն, որ Սորէզի մէջ ըսկըսած է իր ուսումը և տակաւին 15 տարեկան չեղած՝ փայլուն կերպով աւարտած է իր դպրոցական շրջանը Զուիցերիոյ մէջ։

Նուպար իր մտաւորական զարգացման օրրանը եղող յարկերուն հրաժեշտի ողջոյնը տալէն յետոյ, իր մօրեղբօր Պօղոս Պէյ Եուսուֆեանի հրաւիրանօք Եգիպտոս կը կանչուի Կառավարական պաշտօններու մէջ գործածուելու համար։

* * *

Նուպար 1842ին կը հասնի Պօղոս Պէյի քով։ Իր պերճախօսութիւնը, դատելու իր զօրաւոր կարողութիւնը, մտաւոր պաշարը և լեզուագիտութիւնը չեն վրիպեր իր մօրեղբօր սրատես աչքերէն։ Անցողակի ըսենք թէ Նուպար՝ բացի իր Մայրենի լեզուէն, շատ լաւ գիտէր Թուրքերէն, Ֆրանսերէն, Անգղերէն և Իտալերէն լեզուները, որոնց վրայ վերջէն աւելցուցած է նաև Յունարէն և Արաբերէն։

Եգիպտոս հասնելէն քիչ յետոյ, պաշտօնի կոչուած է Արտաքին գործոց Նախարարութեան Թարգմանութեանց Սենեկին մէջ։

Այդ ատեններն էր որ տեղի ունեցաւ Պօղոս պէյի և Մուհամմէտ Ալի բաշայի բաւական ծանր միջադէպը, արդիւնք նախանձորդներու մեքենայութեանց, և որ պատճառ եղաւ մինչև իսկ Պօղոս Պէյի հրաժարման։

* * *

Նուպար Բաշա դեռ երիտասարդ՝ ուզելով կանուխէն վայելել ընտանեկան կեանքի քաղցրութիւնները, 1850 Սեպտեմբեր 3ին Կ. Պոլիս երթալով կ'ամուսնանայ Գէորգ Պէյ Երամեանի դուստր Օրիորդ Ֆուլէկ Երամեանի հետ, կնքահայրութեամբ Ճէզայիրլեան Մկրտիչ ամիրային։

Օր. Ֆուլէկ իր կարգին օժտուած ըլլալով սրտի և մտքի ազնիւ ձիրքերով, կը դիւրացնէ վարչագէտին քայլերը պետական գործոց փշալից և տաղտկալի ասպարէզին մէջ։

Իպրահիմ բաշա 1848ին կը յաջորդէ Մուհամմէտ Ալի բաշային և վիրաբուժական գործողութեան մը ենթարկուելու համար Բարիզ կ'ուղևորի։ Նուպար Բաշա Քարտուղար—Թարգմանի պաշտօնով կ'ընկերանայ անոր, և միասին Կ. Պոլիս ալ հանդիպելով Եգիպտոս կը վերադառնան, ուր մէկ տարի հազիւ բոլորած՝ Իպրահիմ բաշա կը մեռնի, և անոր կը յաջորդէ Ապպաս բաշա՝ որ դարձեալ անձնական քարտուղարի պաշտօնին մէջ կը պահէ զՆուպար, էֆէնտիի տիտղոս տալով։

Նուպար բաշա հակառակ իր երիտասարդ հասակին, քանիցս դիւանագիտական կարեւոր գործերով Եւրոպա կը ղրկուի եգիպտական կառավարութեան կողմէ, և մեծ յաջողութեամբ գլուխ կը հանէ իրեն յանձնուած կարեւոր պաշտօնները։

Այդ ժամանակները Անգլիոյ Ընդհանուր հիւպատոսութիւնը կը վարէր Պ. Մըրրէյ, որ ջերմապէս կը գնահատէր Նուպարի կարողութիւնները և անոր յառաջացման համար իր ջանքերը չ'էր խնայեր բնաւ։

ՆՈՒՊԱՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՐԴԻՆ

Ամուսնութեան հետևեալ տարին 1851, Նուպար Բաշա երջանկութիւնը ունեցաւ ողջունելու իր անդրանիկ զաւակը — այսօրուան Պօղոս Բաշան — որ արժանի յաջորդ մը ըլլալու սահմանուած էր։

Նուպար Բաշա եթէ մեծ դիւանագէտ մը ըլլալու կոչումը ունէր, իր անդրանիկն ալ, Վսեմ. Պօղոս բաշա, առաջնակարգ հնարիչ մը պիտի ըլլար ու եղաւ. և թէպէտ մեր բուն ծրագրէն շեղած պիտի ըլլանք, սակայն կ'արժէ որ՝ առ այժմ՝ գոնէ քանի մը միջանկեալ տողերով ներկայացնենք Վսեմ. Պօղոս բաշան ալ, որ եգիպտական կառավարութեան շատ մը օգտակար ծառայութիւններ մատուցանելէն զատ, վերջերս ալ՝ իր հնարչական տաղանդի մասին շատ խօսել տուաւ, հեղինակած ըլլալով երկրագործական շոգեշարժ արօր մը՝ ա՛յնպիսի կատարելագործեալ վիճակի մէջ, որուն համար Ֆրանսական Կառավարութիւնը իր կարգին Պատուոյ Լէգէօնի պատուանշանովը զարդարեց անոր կուրծքը։

Թողլով առ այժմ օտար թերթերու և հրատարակութեանց մէջ Ն. Վսեմութեան հնարած երկրագործական արօրի մասին հրատարակուած անհամար գովեստալից գրութիւնները, հոս կ'արտագրենք միայն ծերունի բանաստեղծ Տ. Ս. Ֆէլէկեանի մէկ ոտանաւորը, որ 1901ին Նուպրայի իրենց կալուածներուն մէջ յիշեալ շոգեշարժ արօրի առաջին փորձը կատարուած ատեն գրած՝ և «Արշալոյս» Լրագրի նոյն տարւոյ 14/27 Մարտ 163րդ. թուով հրատարակութեան տուած է։

ԿԵՆՍԱՏՈՒ ԱՐՕՐԸ

Օրը Ուրբաթ էր, ամիս Փետրուար,
Ծուպրա արտի մը մէջը կը կենար
Մի շղթաշարժ վիթխարի արօր,
Զինք արօրին քով՝ հսկայ մի հզօր.
Հոն էին դիզուած մեծամեծ մարդեր,
Եւ շատ ժողովուրդ կային անհամբեր.
Արդիւնքը տեսնել այն նոր արօրին,
Որ կեանք պիտի տար մեր բոլոր երկրին.
Հո՛ն էր եւ Վսեմ Պօղոս Նուպարեան՝
Որ ճակտին վրայ հանճարք կը շողան.
Ամենքն յարգեցին այն մեծ հեղինակ,
Որ կուզար մարդկան ներշնչել նոր կեանք.
Հացը՝ որ ամենն պէտքերն է վեր,
Մարդկային ազգին զայն կը պատրաստէր.
Աստուած. հանճար, հաց՝ տարերքն են կեան-
քին,
Որ արեւու պէս ընդ միշտ կը փայլին:

* * *

Արօրը շարժեց կենսաբեր շոգին.
Սկսաւ երթալ նման մի քաջին.
Եւ այն Ծուպրայի ընդարձակ հողեր,
Արագ շարժումով ցիր ու ցան կ'ընէր.
Լայնկէկ ու խորունկ ակօս կը բանար;
Դիւրաշարժ քայլով կերթար ու կուզար.
Հողը կը դողար ներքեւ արօրին.
Զի շատ օրուան գործ ըրաւ քիչ ժամին.
Երկիրը խնդաց, մարդիկ հրճուեցան,
Նոյն ժամ արթնցաւ աշխարհն Հայաստան.
զ'Պօղոսն օրհնեց մայրական խանդով,
Եւ յայտարարեց գոհունակ սրտով,
Թէ «երկրագործի հեղինակ նախկին,
«Հայ մի էր Յաբեթ որդեակը Նոյին.
«Հիմայ ալ այս մեծ, բարձր հեղինակ,
«Դարձեալ հայ մի է մեծ տոհմի զաւակ.
«Ահա թէ ինչո՞ւ կ'օրհնեմ խնդաձայն.
«Զի աշխարհ ասոնց է միշտ պարտական.
«Այրի թող Պօղոս հանդերձ իւրայնով,
«Առողջ երջանիկ. երկայն օրերով:»

3/27/901 — Ա. Գ.

ՊՕՂՈՍ ՓԱՇԱ
BOGHOS PACHA

ՊՕՂՈՍ ՓԱՇԱ
BOGHOS PACHA

Վերադառնանք Նուպար Բաշային բեղմնաւոր կեանքին, որ պահ մը ընդհատելու առիթը ներկայացաւ, երկու խօսք ըսելու համար իր անդրանիկին, Վսեմ. Պօղոս Բաշայի նըկատմամբ։

Մուհամմէտ Ալիի որդին Սայիտ բաշա, Ապպաս բաշայի յաջորդելով, ժամանակ մը եւս անձնական քարտուղարի պաշտօնին մէջ կը պահէ զՆուպար, և 1857ին Պէյութեան տիտղոս շնորհելով անոր, երկաթուղւոյ Վարչութեան Ընդհանուր Տնօրէն կ'անուանէ, ու յետոյ 1862 ին Եգիպտական առաջին փոխառութիւնը կնքելու համար Եւրոպա բանակցութեան կը ղրկէ, ուր Նուպար Բաշա Ֆրանսական առաջարկներուն առաջնութիւն տալով՝ յաջողութեամբ ի գլուխ կը հանէ իրեն սահմանած պաշտօնը։

Հազիւ տարի մը անցած էր այդ օրէն, երբ Ֆէրտինանտ տը Լէսէփսի կազմած ֆրանսական ընկերութեան արտօնուած էր Սուէզի ջրանցքին բացման աշխատութիւնները առաջ տանելու, որք պահ մը տնտեսական և զանազան դժուարութեանց հետեւանօք կանգ առած էին։ Նուպար Բաշա թէև քաղաքական նկատումներով ի սկզբան հակառակ էր ջրանցքին բացման, սակայն երբ այդ ծրագիրը գործադրութեան դրուիլ սկսաւ, ո՛չ միայն չ'հակառակեցաւ անոր, այլև՝ 1863ին պաշտօն ստանձնեց Բարիզ և Պօլիս երթալով բանակցիլ Օսմ. Կառավարութեան և Ֆրանսայի հետ, ու ամենամեծ յաջողութեամբ կրցաւ բառնալ արգելիչ բոլոր կնճիռները, որով միայն կարելի եղաւ աւարտել ջրանցքի բացման աշխատութիւնները։

Նուպարի Եգիպտոս վերադարձած ատեններն, 1863 Մարտ ամսոյ մէջ էր՝ որ Սուլթան Ապտիւլ Ազիզ Եգիպտոս այցելած է և Նուպար՝ Բաշայութեան աստիճանին բարձրացած, որմէ յետոյ վերստին Կ. Պօլիս կ'ուղևորի Բ. Դրան հետ այլևայլ բանակցութեանց համար։ Իսկ 1864ին իբրև ներկայացուցիչ փոխարքային, բանակցութիւններու պատճառաւ Բարիզ կ'ուղևորի, ուր կ'ընդունի Պատւոյ Լէգէօնի Ասպետի պատուանշանը, և անտի կը վերադառնայ Եգիպտական նաւով մը, զոր Իսմայիլ Բաշա յատկապէս իր տրամադրութեան տակ կը դնէ։

Նուպար Բաշա Եգիպտոս վերադարձին, 1865 Յունվար 8ը, Հանրօգուտ շինութեանց Նախարարի պաշտօնին կը կոչուի, պահելով հանդերձ երկաթուղւոյ Վարչութեան Ընդհ. Տնօրէնի պաշտօնը, եւ 1867ին դարձեալ Կ. Պօլիս երթալով, ճարտարութեամբ մը Եգիպտոսի փոխարքաներուն համար «Խտիվ» տիտղոսը ձեռք կը բերէ, դիւրացնելու համար իր ապագայ մեծամեծ ծրագիրները։

Մելքիոռ Տը Վօկիւէ դերակոմսը որ Ֆրանսական ակադեմիայի անդամներէն է, Ֆիկարօի 1899 Յունուար 17 թուոյն մէջ գրած մէկ յօդուածովը, հետեւեալ կերպով կը բացատրէ «Խտիվ» տիտղոսին վերաբերեալ մասը և կարևորութիւնը։

«Իր ճարտարութիւնը յաջողեցաւ նախ ստեղծել այն գործիքը, որուն պէտք ունէր գործելու համար, — Իրապէս անկախ Եգիպտոս մը՝ Սուլթանին անուանական գերիշխանութեան տակ։ Ճարպիկ բանակցողը՝

ԳԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ Арм. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

կ'աւելցնէ գերակոմսը, Կ. Պոլիս եկաւ, ոսկի բանալիներովը՝ Բ. դռնէն խլեց 1867ի ֆէրմաններն եւ «Խտիվ» երկգլխի տիտղոսը, որ Եգիպտական ինքնօրինութիւնը կը նուիրագործէր։ Յետոյ իր դիւանագիտական տաղանդը — եւ թերեւս իր ոսկի բանալիներն ալ փոխադրեց Բարիզ, այ՛ն Բարիզը՝ ուր այն ատեն կը կարգադրուէին աշխարհիս բոլոր գործերը, եւ մանաւորապէս Նեղոսի հովտին վերաբերումները։ Ասոնք ստորագրուած էին այն փչալից խնդիրներուն որ կը յարուցանէր ջրանցքին պեղումը։»

Նուպար Բաշա շատ լաւ գիտէր թէ՝ Եգիպտոսի փոխարքաներուն համար իր ձեռք բերած «Խտիվ» տիտղոսը բաւական չէր Եգիպտոսը բարգաւաճելու, այլ՝ ինչպէս Թայմզի Բարիզեան մեծահռչակ թղթակիցը Պ. Պլովից գրած է, իր թերթին 99 Յունուար 16 թիւին մէջ, յաճախ կը կրկնէ եղեր սա հակիրճ բառերը, որոնք Եգիպտոսի համար պատրաստած ծրագիրները կը համառօտէին. «Եգիպտոս երկու բանի պէտք ունի մեծ եւ բարգաւաճ ըլլալու համար, Արդարութեան եւ Ջուրի.» եւ վերջապէս երկուքին ալ կ'օժտէ Եգիպտոսը։

Ասոր համար է որ իր նշանաւոր գործոց մէջ առաջին տեղ կը գրաւէր Եգիպտոսի դատարանաց վերակազմութեան օգտաշատ եւ արդիւնաւոր գործը։

Նուպար Բաշա տարիներէ ի վեր կը գիտէր թէ՝ հիւպատոսարանները եւ իրենց դատարանները Բաբիրիւչաւիօնները պատրուակ բռնելով շատ պարագաներու մէջ յանիրաւի կը պաշտպանէին օտարահպատակները եւ իրաց այս վիճակէն շատ մը անպատեհութիւններ եւ խառնաշփոթութիւններ կը պատահէին ի վնաս Եգիպտական Կառավարութեան։ Ընտէպ մեծաքանակ տուգանքներ կը վճարէր կառավարութիւնը, եւ շատ անգամ ալ ընիկներուն վրայ ի գործ դրուած ոճիրները անպատիժ կը մնային։

Նուպար Բաշա 1866 Յունուար 10ին Արտաքին Գործոց Նախարար կ'անուանուի, եւ այդ թուականին Քեամիլ բաշա յատկապէս Կ. Պոլսէն Եգիպտոս կուգայ, եգիպտական կառավարութեան առ Օսմ. Կայսրութիւնն հատուցած հարկին կարգադրութիւնը ընելու պաշտօնով։

Նուպար Բաշա անմիջապէս Ղարպիյէ շոգենաւով Բարիզ կը մեկնի այս առթիւ ֆրանսական կառավարութեան կարծիքը առնելու համար։ Ինը ամսոյ չափ կը մնայ հոն եւ յետոյ հրահանգ կ'ընդունի Եգիպտոս վերադառնալ, անկէ պատուիրակութեան պաշտօնով Պոլիս գնալու համար։

Երբ որ նա Պոլիս կը մեկնի, Իսմայիլ Բաշայի եւ Սուլթանին միջեւ ծագած անհամաձայնութիւններուն վերջ մը դնելու համար, Դատական վերակազմութեան ծրագիրն ալ չը վրիպեցներ իր ուշադրութենէն, որ էր՝ հիւպատոսարանական դատարանները վերցնել, եւ կազմել անկախ եւ խառն դատարաններ, ուր՝ թէ՛ բնիկ եւ թէ՛ օտար տարրերը իրենց ներկայացուցիչներն ունենան եւ ատոնց միջոցաւ քննուին քաղաքային, առեւտրական եւ եղեռնական դատերը։

Այս ծրագիրը տարի մը յետոյ

Իսմայիլ բաշայի միջոցաւ կը հաղորդուի թէեւ Կ. Պոլսոյ դեսպաններուն, սակայն Բարիզի մէջ կազմուած յանձնաժողովէն կը մերժուի։ Բայց Նուպար շատ շուտով յուսահատողներէն չ'էր. նորանոր դիմումներ եւ ձեռնարկներ կ'ընէ, դէպի Պոլիս ու Եւրոպա ճամբորդութիւններ կը կատարէ եւ անհամար դժուարութեանց ու խոչընդոտներու յաղթելով, 1874–75ին Տէրութիւններուն ընդունել եւ Բ. Դռնէն ալ հաստատել կուտայ որ խառն եւ անկախ դատարաններ հաստատուին Եգիպտոսի մէջ, եւ արդէն այդ դատարանաց օրէնքներն ալ իր ներշնչումով խմբագրուած եւ պատրաստուած էին։

Ֆէլլահին ճակատագրին բարւոքումն էր իր նշանաբանը, այդ պատճառաւ Նուպար կոչուեցաւ «Ֆէլլահին հայրը, ֆէլլահին բարեկամը» ու այդ 6–7 միլիոն ժողովուրդը իր վրայ կը գուրգուրար։

* * *

Իսմայիլ Բաշա թէեւ հանճարեղ բայց չափազանց շռայլ ու մսխող մէկն էր, եւ անոր այս բնաւորութեան հետեւանքը ա՛յն եղաւ որ Նուպար Բաշայի եւ անոր մէջ անհամաձայնութիւններ ծագին եւ Նուպար Բաշա հրաժարելով Արտաքին Գործոց Նախարարի պաշտօնէն՝ Եւրոպա մեկնի։ Կ'ըսուի թէ՝ այս առթիւ ժողովրդական ցոյցեր ալ տեղի ունեցած են։

Նուպար բաշայի մեկնումը մեծ կարեւորութիւն ունեցաւ, նախ՝ ա՛յն պատճառաւ որ՝ Իսմայիլ Բաշայի տուած հրամանին համաձայն տեղի կունենար, եւ երկրորդ՝ այն պահուն, երբ Նուպար Բաշա Եւրոպա կը գտնուէր — 1876–1877 — Պուլկարիոյ ապստամբութիւնը տեղի ունեցաւ, եւ Պիզմարք իշխան՝ Եւրոպական մեծ Տէրութեանց առաջարկեց որ Նուպար Բաշա Պուլկարիոյ Ընդհանուր Կառավարիչ նշանակուի։ Պիզմարքի այս առաջարկը թէեւ բոլոր Տէրութիւններուն կողմէ ընդունուեցաւ, սակայն Ռուսօ–Թրքական պատերազմը այս առաջարկին իրականացման արգելք եղաւ։

Իսմայիլ Բաշա սակայն, ո՞վ գիտէ ի՛նչ անճառելի ստիպողականութեան տակ, 1878ին վերստին Եգիպտոս կը կանչէ զՆուպար Բաշա, որ Եգիպտոսի նոյն ատենուան կացութեան վրայ, Լոնտրայի մէջ Լորտ Սալզպուրիի եւ Լորտ Պագընս Ֆիլտի, իսկ Բարիզի մէջ Լորտ Լիօնի եւ Պ. Վատինկթընի հետ խորհրդակցութիւններ ունենալէ յետոյ միայն կը վերադառնայ։

Նուպար Բաշա Եգիպտոս հասնելուն պէս Իսմայիլ Բաշայի կառաջարկէ որ Խտիվական իր բոլոր կալուածները կառավարութեան թողու, ասոնցմով ապահովելու համար գոյացած պարտքերը, միանգամայն կը ներշնչէ անոր որ նախարարաց խորհուրդ մը կազմուի։

Իսմայիլ Բաշա համամիտ կ'ըլլայ այս գաղափարին, եւ 1878 Օգոստոս 28 թուականաւ Նուպար Բաշայի հասցէին ուղղուած հրովարտակով մը՝ հրահանգ կուտայ անոր կազմել Նախարարաց Խորհուրդը, նախագահութիւնը իրեն վերապահելով։

Նուպար Բաշա ըստ հրահանգի, կը կազմէ Նախարարաց Ժողովը իր Նախագահութեան տակ, պահելով

միանգամայն Արտաքին եւ Դատական գործոց Նախարարի պաշտօնները։

1879 Փետրուար ամսոյ մէջ պատահած խռովութիւնները սակայն, պատճառ կ'ըլլան որ Նուպար Բաշա հրաժարականը տալով Եւրոպա մեկնի, ու անոր կը յաջորդէ Թէվֆիգ Բաշա՝ իբր նախագահ Նախարարաց Խորհրդոյն։

Կարծողներ կան թէ՝ վերոյիշեալ խռովութեանց թելադրիչը եղած է բուն իսկ Իսմայիլ Բաշա, դժուարութիւններ յարուցանելու համար Նուպար Բաշայի պաշտօնավարութեանց դէմ, սակայն Նուպար Բաշա ալ չուտով յուսահատողներէն չէր, և անշուշտ ինք եղած է ներշնչողը որ Պիզմարք իշխանը՝ Ֆրանսական և Անգլիական կառավարութիւններէն պահանջէ Սուլթանին թելադրել, պաշտօնանկ ընելու համար Իսմայիլ Բաշան։ Եւ ստուգիւ հազիւ երեք ամիս կը բոլորի Նուպար Բաշայի Եւրոպա մեկնումէն յետոյ, և ահա Սուլթանը՝ 1879 Յուլիս 26ին, հեռագրով Իսմայիլ Բաշայի հրաժարման Իրատէն կը ղրկէ, եւ անոր հետեւող ուրիշ հեռագրով մ'ալ Թէվֆիգ Բաշան Եգիպտոսի Խտիվ կ'անուանէ։

Թէվֆիգ Բաշայի հօրը յաջորդելէն չորս տարի յետոյ—1884 Յունուարին—Նուպար Բաշա վերստին Արտաքին Գործոց Նախարարի և Նախարարապետի պաշտօններուն կը կոչուի, և երկրին բարգաւաճմանը համար իր յղացած ծրագիրներուն մէկ մեծագոյն մասն ալ ի կատար հանելէ յետոյ 1888ին կը հրաժարի ու անկէ յետոյ 1892 Յունուար 7ին տեղի կ'ունենայ Թէվֆիգ Բաշայի մահը, և նոյն ամսոյ 16 ին արդի Խտիվ Աբբաս Բաշայի Վիէննայէ գալուստը, իսկ այս դէպքերէն երկու տարի վերջ, 1894 Ապրիլ ամսոյ մէջ. Նուպար Բաշա, որ դարձեալ Նախարարապետի պաշտօնին կոչուած էր, վերջնապէս կը հրաժարի պաշտօնէն ու իր յոգնած կազմը դարմանելու կ'զբաղի։

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍԱԿԷՏՈՎ

Նուպար Բաշա քննադատողներու թիւ մը ունեցած է, բայց չենք կարծեր թէ՝ այդ քննադատները կարենան արդարացնել իրենց գրածները. որովհետև առանց յիշելու լռութեան մէջ ըրած անհատական անհամար բարիքները՝ ի գոհացումն հազարաւոր վշտակիր սրտերու, Նուպար Բաշա՝ հեռի մնացած չէ՛ մասնակցելու նաև կրթական գործոց, երբ իրեն օրինաւոր դիմում եղած է։

Օրինակ մը մեր գիտցածներէն տալէ յետոյ, խօսքը ուրիշներու պիտի թողունք, մանաւանդ ա՛յնպիսիներուն՝ որոնք աւելի մօտէն ծանօթ և գիտակ են Նուպար Բաշայի գործերուն, և կրնան հաստատել թէ՝ պետական այդ մեծ դէմքը ի՛նչ սիրտ և զգացում կը կրէր իր ազգին հանդէպ։

Ոչ ոքի գրեթէ անծանօթ է Նուպար — Շահնազարեան վարժարանի հիմնարկութեան բոլոր պարագաները. սակայն անպատեհ չ'պիտի ըլլայ այս տեղ կրկնել զանոնք ի հաստատութիւն մեր վերագրեալ տողերուն։

Կարապետ Վարդապետ Շահնազարեան Կ. Պոլսոյ մէջ տեղեկանալով Նուպար Բաշայի առատաձեռնութեանց համբաւին, յատկապէս Եգիպտոս կուգայ, բարձրագոյն վարժարան մը հիմնելու համար ժամանակէ մը ի վեր իր յղացած մէկ ծրագիրը անոր ներկայացնելով նիւթական օժանդակութիւն խնդրելու,

Նուպար Բաշա անմիջապէս կը համակրի այդ ձեռնարկին, և իրմէ պահանջուած նիւթական ձեռնտուութիւնն ալ չ'խնայեր. բայց հայերու վարժարան կառավարելու ընդմիշտ աննախանձելի դրութիւնը պատճառ կ'ըլլայ որ Նուպար—Շահնազարեանի դռները փակուին, որ մը՝ վառելափայտի տեղ վաճառուելու համար, և Նուպար Բաշա վշտանայ՝ ու նմանօրինակ հաստատութիւններու վրայ սպասուած չափովը չի մըտածէ։

Եթէ Նուպար—Շահնազարի վարժարանին մատակարարութեան եղանակին և կազմակերպութեանց վրայ Արգոսի աչքերով հսկել գիտնար հայ ժողովուրդը և կանգուն պահուէր այդպիսի օգտակար հաստատութիւն մը, ապահովապէս Նուպար Բաշա ալ նորանոր օժանդակութիւններ պիտի փութացնէր և թերեւս մինչև այսօր յիշեալ վարժարանը իր լուսոյ վառարանի դերը սքանչելապէս պիտի կատարէր։

Գրաւէր Աստղ. (Ե. Տէմիրճիպաշեան) որ իր գրութիւններովը ծանօթ է, հետեւեալ կերպով կը բացատրէ Նուպար—Շահնազարեան վարժարանի դէպքը, որ չատ սրտակտուր է եւ կը դատապարտէ հայերու անտարբերութիւնը։

«Կարապետ վարդապետ Շահնազարեան ինքզինքէն զրկելով 1000 ոսկիի չափ գումար մը հաւաքած էր՝ գաւառացի ուսանողներէ կամ ժառանգաւորներէ ապագայ եկեղեցականներ պատրաստող դպրոց մը հիմնելու նպատակաւ, եւ իր բաղձանքը հաղորդած էր Նուպար Բաշայի եւ անոր եղբօր՝ Առաքել Պէյի։

«Նուպար Բաշա բանակցելով ժամանակին Ազգային վարչութեան եւ Խասգիւղի քարոզչին հետ, իր կողմէ զոհողութիւն մը ընելով, գործադրեց Կարապետ վարդապետին կտակն, անոր 1000 ոսկին յատկացնելով նպատակին, եւ ի պատիւ իր վաղամեռիկ եղբօր, անոր անունն ալ կցելով հաստատութեան։

«Վարժարանն հիմնուեցաւ 4—5000 ոսկիի դրամագլխով, որուն մէջ Նուպարեան գերդաստանին բարեգործութեան բաժինն էր 3—4000 ոսկի։

«Շահնազարեան վարժարանն յուսախաբութիւններու շարք մը եղաւ, նախ ազգին համար, յետոյ Բաշային համար. իր էն յաջողակ աշակերտները Խասգիւղի Ներսէսեան վարժարանին բարձրագոյն կարգին կը պատկանէին, զոր խմբովին փոխադրուած էին նոր դպրոցն, արտաքոյ կարգի փայլ մը տալու համար անոր։ Խասգիւղի դպրոցին եւ թաղին անիրաւութիւն մը եղաւ, փառք մը աւելցնելու համար նոր հաստատութեան վրայ։ Առաջին կարգի դասատուներ, հայազգի թէ Եւրոպացի, կը դասախօսէին Շահնազարեանին մէջ, որոյ շնորհիւ Խասգիւղ ալ պահ մը նոր կարեւորութիւն մը ստացաւ։ Բայց մատակարարութիւնը չատ գէշ էր։ Մենծ—Աղաներուն մէջէն չափէն աւելի խառնուողներ կային, կողմնակցութիւն, népotisme, եւն, իրենց դերերը կը խաղային։ Կարգապահութիւնը վերջին ծայր թոյլ էր։ Ի մի բան, ազգին մէջ ոչ մէկ վարժարան աւելի մեծ ակնկալութիւններով բացուած էր, եւ ոչ մէկ վարժարան աւելի կարճատեւ եղաւ։ Օսմ. քօնսօլիտէներու եկամուտին յանկարծ պակսիլն ալ վերջին հարուածն եղաւ դպրոցին մատակարարութեան։ Երկու երեք տարիի փայլուն շրջանէ մը ետքն, սկսաւ կաղալ, յետոյ գոցուեցաւ. Շէնքն ի սկզբան նեղ գալ սկսած էր, եւ յատկապէս կառուցուած էր, ընդար-

ձակ փայտաշէն դպրոց մը, բայց այս դպրոցը աւելի երկար ատեն աղքատանոց եղաւ յետոյ, քան որչափ դպրոց չէր եղած ի սկզբան։

«Խեղճ չէնքին անցուցած երրորդ շրջանն ալ, այն է աւերակութեան շրջանն, առջի երկուքէն ալ աւելի տեւեց։ Եւ այս երրորդ շրջանին մէջ շատ աւելի սիրտ ծակեց, որչափ միտք չէր սրած իր առաջին շրջանին մէջ, որչափ թշուառութիւն չէր պատսպարած իր երրորդ շրջանին մէջ։ Օրին մէկն քուրդ հնգազմիններն եկան, եւ Պատրիարքարանի ելեւմտից տեսչութեան տնօրինութեամբ շէնքը քակեցին, գոյացած դրամով դպրոցին քանի մը հինումին պարտքերը վճարելու համար։»

Գրասէր Ատոմին այս սրտաշարժ նկարագրութիւնը պերճախօս ապացոյց մ'է, որ Նուպար Բաշայ օրին մէկը իրաւունք պիտի ունենար յայտարարելու թէ՝ «Ես նեղացած եմ այս ազգին.» ինչ որ մէկ քանիներու քով յայտնապէս ալ ըսած է։

Բայց իրապէս նեղացա՞ծ մնաց. ու ի՞նչպէս վարուեցաւ. պատասխանը ժխտական պիտի ըլլայ. Նուպար միշտ հոգւով սրտով իր ազգին յառաջդիմութեանը փափաքող՝ և կապուած մնաց անոր հետ, ու իր պաշտօնական դիրքին ներած սահմաններուն մէջ միշտ օգտակար ըլլալու աշխատեցաւ անոր։

Այս պարագան ալ հաստատելու համար Անահիտի Ա. տարի թիւ 4ին կը դիմենք, որ վսեմ բացատրութեամբ մը Նուպարի զանազան պարագաներու մէջ ցոյց տուած ազգասիրական զգացումները կը տարփողէ։

«Ու տեսայ որ՝ կ'ըսէ Ա. Չօպանեան, այդ եօթանասնամեայ մարդը, փառքով ու վայելքներով յղփացած, կը խշխշար, կը մորմոքէր մտածելով անռելի կացութեանը վրայ, ուր ինկած էր հայ ժողովուրդը Սասունէն ի վեր։ Բազմակուտակ փորձառութեան մը վրայ հիմնուած այդ պայծառ դատողութիւնը, իրական կացութեան ճշգրիտ ու խորին այդ զգացումը, եւ նրբամիտ փայփայական ու համեղ խօսուածքը, զոր ունէր այդ մոգիչը, ինծի այդ օրը մխիթարիչ յայտնութիւնը ըրին կատարելագործուած հայուն. հայուն՝ որ թերութիւնները վանած է եւ ունի յատկութիւնները միայն իր ցեղին։ Այդ օրէն սկսեալ, մինչեւ ծագումն իր հիւանդութեանը՝ որ զինքը մահէն առաջ անշարժացուց, կրցայ մտերմօրէն զինքը ուսումնասիրել։

«Տեսայ ո՛րքան ցաւալի սխալ մը գործած էր մեր ազգը՝ չգիտնալով օգտուիլ այդպիսի մարդէ մը։ Իրաւ է որ Նուպար քաղքենին եղած էր Եգիպտական հայրենիքին, բայց երբէք մոռցած չէր ցեղը, որուն կը պատկանէր, եւ նոյն իսկ մոռցած չըլլալուն ապացոյցները տուած էր մէկէ աւելի անգամ. եւ եթէ իր ցեղը զինքը հասկցած, գնահատած ըլլար, եթէ իր ցեղը ուզած ըլլար դիմել անոր ուժերուն, Նուպար իր ներքին մեծագոյն բաղձանքին գոհացում տուած պիտի ըլլար իր տաղանդը ծառայութեանը դնելով իր ցեղին, զոր հիացմամբ կը սիրէր։

«Քանի՛ անգամ լսած եմ իր դառնութեամբ տրտնջալը այն պաղ անտարբերութեան համար որով իր ցեղը զինքը պաշարած էր։

«Ես, կ'ըսէր, կեանքս նուիրեցի Եգիպտոսի, որովհետեւ բաղդը իմ առջիս այդ գործը հանեց, հրապուրուեցայ անկէ եւ կապուեցայ։ Բայց օտար երկրի մէջ այդ գործունէութիւնս երբեք ինծի չ'մոռցուց որ հայ մըն եմ, երկու երեք բան ըրած եմ ցեղիս համար, բայց կը կարծեմ թէ՝ ատոնք ամենէն կարեւոր բաներն են որ կրնայի ընել։

Այս խօսքերով կ'ակնարկէ Հասգիւղի Տանազարեան վարժարանին

հաստատմանը նիւթապէս օգնելը. Պ. Լանկլուային 25000 ֆրանգ տալը, որպէս զի Հայոց Պատմութիւնը Ֆրանսերէնի թարգմանէ և Ֆրանսայի ճանչցունէ Հայոց անցեալը, և Պէրլինի Վեհաժողովին ատեն, ծրագիր մը պատրաստելը հայկական գաւառներուն համար և առաջարկելը՝ որ ինք անձամբ ներկայացնէ զայն Վեհաժողովին։

«Ասոնց համար՝ Նուպար Բաշա ամբողջ ուղեգիծ մ'էին կ'ըսէր իրօք. զարգացնել հայոց միտքը, ճանչցնել հայ ազգը Եւրոպային, ու Եւրոպական քաղաքականութեան նպաստաւոր մէկ բոպէին՝ հայկական գաւառներուն մէջ հաստատել Եւրոպական վարչութիւն մը՝ հիմնուած օրէնքի եւ արդարութեան վրայ։ Իր կեանքին մեծ ցաւը եղած էր այդ անհասկացողութիւնը, զոր իրեն ցուցուցեր էր հայ ազգը։

«Քսան անգամ դարակէն հանած է իր ծրագրին դեղնած տետրակիկը, եւ գուրգուրանքով, տրտմութեամբ ու խանդավառութեամբ կարդացած է զայն ինծի։

«Եւ կը կրկնեմ հոս ինչ որ գրեցի արդէն, կարելի է որ այդ ծրագրին նոյնութեամբ իրագործումը արգելքներու բաղխէր, բայց հայ ժողովուրդին յանցանքը այդ պարագային ոչ այնչափ այդ ծրագիրը, որչափ նոյն իսկ անձնական միջամտութիւնը մերժած ըլլալն է այդ մարդուն, որ իր ճարպիկութեամբը անկարելին կարելի ըրած էր Եգիպտոսի մէջ, եւ որ անշուշտ, անգամ մը որ հայկական գործը ձեռք առնէր, միջոցը պիտի գտնէր ո՛եւէ գործնական արդիւնք յառաջ բերելու։»

Անահիտի այս հատուածը մէջ բերինք, ցոյց տալու համար թէ՝ ի՞նչպէս Նուպար Բաշա օգտակարը ընտրել գիտէ, և ի՞նչ համոզումով Պ. Վ. Լանկլուայի 25000 ֆրանգ տրամադրած է իր ազգին պատմութիւնը Եւրոպային ճանչցնելու համար։

Ու դեռ հոս չ'աւարտիր Նուպար Բաշայի ծրագիրը։ Երբ Սասունի ջարդերուն լուրը պայթեցաւ ու Եւրոպայի մէջ հայկական խնդիրը ըսկսաւ նորէն արծարծիլ, Նուպար ինքնաբերաբար 15000 ֆրանգ ղրկեց Վենետիկի Միաբանութեան, որպէս զի ֆրանսերէն գիրք մը հրատարակեն Հայոց անցեալը ու ներկան Եւրոպային ծանօթացնող, որուն մէկ օրինակը ձեռքի տակ ունենալու բաղդին արժանացած չենք տարաբաղդաբար։

Հետեւինք դեռ Անահիտի գրածներուն.

«Այդ միջոցին. Նուպար գործէ վերջնապէս քաշուած, Բարիզ եկաւ հաստատուիլ. եւ այդ վայրկեանէն մինչեւ իր մահը, հակառակ այն դառնութեան զոր ազգը իրեն պատճառած էր, իր միտքն ու սիրտը ամբողջապէս հայ ժողովուրդին կացութեանը նուիրեց. հիմա ծեր, մէկ սրունքը ձիէ անկումէ մը հաշմուած, եւ մտքով ալ խոնջ էր. հայկական խնդրոյն այս նոր վերաբացմանը մէջ, չէր կրնար անձնական դեր մը խաղալ իբր դիւանագէտ։ Բայց իր հանրածանօթ եւ յարգուած անձի կշիռը բերաւ այդ հարցին կողմը, հրապարակաւ յայտնեց, կրկնեց, պնդեց թէ՝ իր չարչարուած ազգակիցներուն հետ էր սրտով, ամէն հայասէր ցոյցի իր քաջալերութիւնը, ամէն հայասէր եւրոպացւոյ իր երախտագիտութիւնը հասցուց, եւ այսպէս ունեցաւ իր կարեւոր բաժինը եւրոպայի մէջ ի նպաստ հայոց հանրային կարծիքը արթնցնելու գործին մէջ։»

Նուպար Բաշա անտարբեր չ՛մնաց նաև հայերու վրայ ի գործ դրուած խժդժութեանց հանդէպ ։

Ռուսիոյ Զարին Բարիզ այցելած ատեն, ուր կը գտնուէր նաև ինք, ունկնդրութիւն մը խնդրած է Զարէն, որպէսզի հայերու կրած անհանդուրժելի զրկանքներն ու անպատմելի տառապանքները բացատրելով անոր, միջամտութիւնը խնդրէ, վերջ մը դրուելու համար անոնց ։

Վեհ. Զարը՝ թէպէտ այդ ունկընդրութիւնը շնորհած է իրեն, սակայն իր խնդրանքին նպաստաւոր հետեւանք մը ունենալու կարելիութիւնը ապահոված չէ . . . ։ Այս բանը խորունկ վէրք մը բացած է Նուպարի սրտին մէջ ։

Նուպար Բաշայի կենաց վերջին օրերը տառապանքի օրեր եղան հիւանդութեանը պատճառաւ ։ Իր այդ տառապագին վիճակը կը յառաջանար սրունքներէն միոյն ջախջախուելէն, որ չարաբաստիկ օր մը՝ իր Շուպրայի կալուածներուն մէջ ձիով պտոյտ մը կատարելու ատեն վար իյնալով ծանրապէս վնասուած էր ։ Այնուհետև ծերութենէ անբաժան եղող պարբերական հիւանդութիւններով անցուց իր օրերը և 1899 ի սկիզբները իր հոգին աւանդեց միշտ պայծառ մտքով հետևելով իր ազգին ու արենակիցներուն կրած չարչարանքներուն, և ցաւելով անոր մարտիրոսացման վրայ։

«Մենք պէտք չէ որ մոռնանք այդ դէմքը, եւ անոր ազնուական ու կաթոգին բարութիւնը, կը վերջացնէ Ա. Զօպանեան ։ Պիտի չ՛մոռնանք այդ ընտրըուած հոգին, որ ոյժ մըն էր՝ գաղափարի մը անբաժանօրէն կապուած ։ Պիտի յիշենք իր ալեւոր «ընկեր»ի անբաղդատելի խօսակցութիւնը, անթոյն ուպատկերալից սրամտութեամբ մը լուսաւոր, հաստուն մտածումով մը ամրացած, արեւելցի զրուցարանի համեղ ու թեթեւ շընորհովը տոգորուն ։ Իր պայծառ տեսողութիւնը կեանքի, իր հաւատքը արդարութեան յաղթանակին, իր գործնական եւ յստակ ըմռնումը ազգերու ճակատագրին, իր բովանդակ խորին ու պարզ մտածողութիւնը պիտի ապրին մեր մէջը անջնջելի ։ Եւ իր յիշատակին լաւագոյն յարգանքը ընծայած պիտի ըլլանք, եթէ կարենանք ծաւալել մեր մէջը բարեբար ազդեցութիւնը այդ իմաստունի ձայնին, որ՝ անկեղծ, հանդարտ ու քաղցր շեշտով մը, մեկ քանի որոշ ու բեղմնաւոր ճշմարտութիւններ աւանդեց մեզի ։»

Այսպէս՝ յանձին Նուպար Բաշայի, Եգիպտոս կորսնցուց իր մեծագոյն պետական մարդը, իսկ ազգը իր պատուական մէկ զաւակը ։

ԹԱՂՈՒՄԸ

Նուպար Բաշաի մարմինը Բարիզի մէջ զմռսուելով Սաֆաղիեճ շոգենաւով Աղէքսանդրիա փոխադրուեցաւ ։ Անպատմելի շքեղութեամբ տեղի ունեցաւ յուղարկաւորութեան հանդէսը որուն մասնակցողները թիւ և համար չ՛ունէին ։

Հանգուցելոյն դագաղին վրայ դամբանականներ խօսեցան մէկէ աւելի ծանօթ դէմքեր, որոնցմէ բաւականանանք յիշատակելով Նախարարապետ Վսեմ. Ֆախրի Բաշայի և խառն դատարաններու նախագահ Պ. Մօռիս Պէլլէի խօսածները ։

Ահա այդ դամբանականներու բովանդակութիւնները ։

Ժուռնալ Օֆիսիէլի մէջ հրատարակուած է Վսեմ. Ֆախրի Բաշայի հետեւեալ դամբանական ճառը։

ՖԱԽՐԻ ԲԱՇԱ

«Պարոննե՛ր,

«Այս պահուն՝ երբ գերեզմանը յաւիտենապէս կը ծածկէ Նուպար Բաշայի նշխարները, կը փութամ յանուն իմ եւ բոլոր աշխատակիցներուս վերջին եւ տխրալի մնաք բարեաւը ըսել մեր հոյակապ պաշտօնակցին ։

«Հանգուցելոյն պարտաճանաչ եւ պարկեշտ կեանքին անթուելի մանրամասնութիւնները վերյուշել իմ նպատակէս դուրս է. բայց կառավարութիւնը՝ զոր այստեղ ներկայացնելու պատիւը ունիմ, պարտ անձին կը համարի իր կսկիծը միախառնել հանրային այն ընդհանուր սուգին, որ կը պատճառէ կորուստը մեծանուն պետական մարդուն, որուն անունը կէս դարէ աւելի ժամանակէ ի վեր սերտօրէն կապուած է եգիպտական պատմութեան հետ, եւ որ՝ իր երկարատեւ ու փայլուն ասպարէզին մէջ Եգիպտոսի բոլոր Փոխարքաներուն եւ Խտիվներուն գնահատելի ծառայութիւններ մատուցանելով, բովանդակ Եգիպտոսը առ յաւէտ երախտագիտական զգացում մը առ ինքն տածելու կը պարտաւորէ ։

«Զայնակցելով ուրեմն այն համակրական արտայայտութիւններուն, որոնցմով շրջապատուած է այս պահուս գինքը ողբացող ընտանիքը, մխիթարութիւն կը հայցենք անոր մահուան հանդէպ զգացուած արդարացի վշտին համար ։

Պ. ՄՕՐԻՍ ՊԷԼԼԷ

«Պարոննե՛ր,

«Պէտք չունիմ ձեզի յիշեցնելու քաղաքական ասպարէզը պետական այն նըշանաւոր անձնաւորութեան, զոր կորսնցուց Եգիպտոս եւ որ այլ եւս պատմութեան կը պատկանի. ուրիշները ինծմէ աւելի ձեռնհասօրէն պիտի ընեն այս բանը ։ Բայց իբրեւ նախագահ Խառըն դատարաններու վերաքննիչ ատենին՝ կուգամ՝ յանուն իմ պաշտօնակիցներուս՝ վերջին ու հանդիսաւոր մեծարանք մը ընծայելու տխուր պարտականութիւնը կատարել ։ Ամենքնիդ ալ գիտէք թէ՝ 1875 էն առաջ դատական վարչութիւնը ի՛նչ էր Եգիպտոսի մէջ ։

«Նուպար Բաշա՝ այն հազուագիւտ խելքով եւ բարձր իմացականութեամբ՝ որոնք իր յականիշներն էին, առաջինը եղաւ ըմբռնող թէ՝ բարենորոգման պէտք ունի այն ։ 1870 էն իսկ ըսաւ Եւրոպային. — Բարւոք դատարաններու շընորհիւ է որ բարւոք վարչութիւն ձեռք կը բերուի ։ Տեղական իշխանութեան վրայ իր իմաստուն խորհուրդներուն ազդեցութեամբը, եւ տէրութեանց ներկայացուցիչներուն թանկագին աջակցութեանը շնորհիւ, եւ շնորհիւ մանաւանդ իր տոկուն յարատեւութեանը խառն դատարանները հաստատուեցան ։

«Այն արդիւնքները՝ զորս Նուպար Բաշա նախատեսած էր, իրականացան ։ Երկրին վարչական եւ ելեւմտական վերակազմութիւնը՝ դատական բարենորոգման բնական հետեւանքը եղաւ ։ Դատարանները իրենց վճիռներով անանցանելի պատուար մը կանգնեցին զեղծումներու դէմ ։ Ուրեմն, Նուպար Բաշա Եգիպտոսի վերանորոգիչներէն մէկը եղաւ, եւ ինչ որ ալ ըլլան իր միւս արժանիքները՝ հանրային երախտագիտութեան, դատական բարենորոգումը՝ անոր կեանքին ամենէն հոյակապ գործը պիտի մնայ ։ Եւ իրաւ ալ իր նախասիրած գործն էր, ի՛նչ մեծ հոգածութեամբ հսկեց անոր վրայ, եւ հետեւեցաւ անոր յառաջդիմութիւններուն ։

«Վերջապէս Պարոններ, իբր թէ ինքզինքը մեզի միացնել ուզէր վերջին կապով մը, իր այնքան սիրած այդ դատարանի պաշտօնատան մէջն էր որ

(10260-58)

հանգչեցաւ Նուպար Բաշաի մարմինը, ամփոփուելէ առաջ հանգուցեալ եղբօրը քով, որմէ այնչափ սիրելի յիշատակ մը կը պահէր միշտ ։

«Խոնարհինք, Պարոններ, անհետացող այս մեծ դէմքին առջեւ, որ այնքան սիրեց արդարութիւնը։ Երանի՜ թէ մեր խոր վշտին արտայայտութիւնը ըսփոփանք մը ընծայէ սգաւոր ընտանիքին որմէ այնչափ սիրով բաժնուեցաւ Նուպար Բաշա, — իր այրիին՝ որ անոր կեանքին ընկերը եղաւ ու այնքան անձնուիրութեամբ շրջապատեց զինքը, մինչեւ իր կեանքի վերջին օրերուն մէջ, եւ իր զաւակին՝ որով իրաւունք ունէր հպարտանալու եւ որ նախասահմանուած է յաւերժական պահելու մեր մէջ անուն մը՝ որ չ'պիտի մոռցուի ։»

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Նուպար Բաշայի յիշատակին համար ընծայուած յարգանքը միայն Եգիպտական հողին վրայ, Եգիպտաբնակ ժողովուրդին մէջ չ'սահմանափակուեցաւ ։ Միայն Եգիպտացին չէր որ անոր բարձր արժանիքը կը գնահատէր, այլ ամբողջ հայութիւնը ։

Ասոր ապացոյց կրնանք նկատել այլ և այլ կեդրոններու մէջ տեղի ունեցած հոգեհանգստեան արարողութիւնները ։ Յիշատակենք 1899 Յունուարի 25 ին, Կ. Պոլսոյ Մայր եկեղեցւոյն մէջ, խուռն և ընտրեալ բազմութեան մը ներկայութեամբ տեղի ունեցած հոգեհանգստեան մեծաշուք հանդէսն, որոյ միջոցին Ամեն. Օրմանեան Պատրիարքը իր համբաւեալ բնատուր պերճախօսութեամբ հետեւեալ խորիմաստ քարոզը խօսած է՝ «Իմաստութեամբ շինի տուն և հանճարով կանգնի և խորհրդով լնուն շտեմարանք» Սողոմոնի խօսքը իրեն բնաբան ընտրելով ։

Պերճաբան քարոզիչը լայնօրէն բացատրելէ յետոյ թէ՝ իմաստութիւնը առաքինութեամբ կըլլայ, հանճարը իմացականութեամբ և խոհականութիւնը՝ աշխարհի մէջ վարուելու հնարամտութեամբ ու ամէն գործի մէջ ճարտարօրէն ընթանալով, թէ՝ այս խելացի սկզբունքին հետեւողութեամբ է որ ամէն անհատ կրնայ շէնցնել իր տունը, լեցնել իր շտեմարանը, և օգտակար դառնալ իր ազգին, իր եկեղեցիին ու երկրին, որոնք իր տունն են, կը յաւելու ։

«Այս երեք յատկութիւնները գերազանցօրէն կը նշմարուէին յանձին Նուպար Բաշայի, որ հանդիսացաւ ազգին առաջին ու բարձրագոյն անձնաւորութիւնը. իր կեանքով ու գործերովը պատիւ բերաւ հայութեան և իր մահուամբ ընդհանուր սուգի մէջ կը թողու հայութիւնը ։

«Ինքը թէև բնակութեամբ և գործունէութեան ասպարէզով հեռի մեզմէ, բայց սրտով մօտ էր մեզի. օգտակար եղաւ դպրոցներու և դըպրութեանց, սփոփիչ կարօտեալներու և աղքատներու ։ Բարեպաշտ ապրեցաւ ու սիրեց միշտ իր եկեղեցին իր դիւանագէտի յաջողութիւնները ու օտարներուն առջեւ վայելած համբաւն ու վարկը չ'օտարացուցին բնաւ զինքը. պարծանօք կրեց հայ անունը և պանծացուց զայն օտարներու առջև ։

«Նուպար Բաշա ինչպէս իր ազգին ու եկեղեցւոյն՝ այնպէս ալ հաւատարիմ հպատակ մնաց տէրութեան որուն շահերուն ծառայեց իր բովանդակ պաշտօնավարութեանը միջոցին և կայսերական հրամանով ու հաճութեամբ էր որ բարձրացաւ պետական աւագ աստիճաններու ։ Ասոնք եղան իր գլխաւոր նկարագիրը. իբրև անհատ՝ իր գործերուն մէջ, իբրև քրիստոնեայ՝ իր պարզութեանը մէջ, իբրև հայ՝ իր յարաբերութեանցը մէջ ։»

* * *

Իր ծննդավայրին ազգայիններն ալ իրենց կարգին անտարբեր չ'մնացին իրենց մեծ քաղաքացիին մահուանը առջև ։

Պետական մեծ անձնաւորութիւնը հոն ալ սգացողներ ու լացողներ պատրաստած էր. թէպէտև իր սերունդէն հոն մնացողները շատ ցանցառ թիւ մը կը կազմէին, սակայն տեղւոյն բոլոր հայութեան երախտագիտութիւնն էր որ պատճառ տուած էր Իզմիրի Սբ. Ստեփաննոս եկեղեցւոյն մէջ մեծահանդէս հոգեհանգիստ մը կատարուելու, որոյ միջոցին Պ. Գարեգին Ց. Փափազեան երկսեռ խառն բազմութեան մը առջև հետեւեալ դամբանականով յայտնեց մերազնէից ցաւակցութիւնը, հանդէպ անոր մեծ կորստեան ։

«Տխուր եւ միանգամայն նուիրական պարտաւորութիւն մը կատարելու համար համախմբած ենք այսօր այս տաճարին մէջ—մեծ մարդու մը, երեւելի հայրենասէրի մը յիշատակը նուիրագործելու—մեծ մարդու մը՝ որոյ մահը կ'ողբան այսօր հայք եւ օտարազգիք ։

«Պէտք է խոստովանիք թէ՝ մեր ազգայնոց շատերը տկար գաղափար մը ունեցած են Նուպար բաշայի նկատմամբ, մինչեւ վերջին ժամանակներս նա մեզ համար հայ օտարական մ'էր, մեկուսացեալ Եւրոպացի մ'էր. այո՛, այնպէս կը կարծուէր թէ՝ Նուպար բաշա Եւրոպական աշխարհի մէջ իր ունեցած բարձր դիրքով, բոլորովին օտար տարրեր, օտար մթնոլորտի մէջ ապրելովը մեզմէ եւս օտար լինէր ազգային տեսակէտով ։ Սակայն ո՛չ, այս միմիայն թիւր ենթադրութիւն մ'էր մեր կողմանէ, քանզի ահաւասիկ իր մահուանէ անմիջապէս ետքը Եւրոպական լրագիրները հետզհետէ ի լոյս բերին, եւ մեզի ծանօթացուցին այս մեծ քաղաքագէտին ընտիր ընտիր բարեմասնութիւնները, մանրամասնօրէն նկարագրելով անոր քաղաքական բարձր տաղանդը, արդարասէր անյողդողդ հաստատամտութիւնը, անոր հայրենասիրութիւնը, մինչեւ իսկ անոր ընտանեկան ներքին կեանքը, յիշատակելով միանգամայն այն հոյակապ գործերն, որոնց նախաձեռնութիւնն ինքն ըրած էր. հետեւաբար մենք եւս յանկարծ նոր արթնցողի մը պէս սկսանք տարբեր լուսով նկատել Նուպար Բաշան. եւ հիմա միայն զգացինք թէ՝ ի՞նչ մեծ կորուստ էր որ ազգը ըրաւ, քանզի ամէն հայ հպարտութեամբ տեսաւ թէ՝ Նուպար Բաշա մեծ քաղաքագէտ լինելէ զատ՝ մեծ հայրենասէր, եւ բարձր սիրտ կրող հայ մ'է եղեր ։

«Իբրեւ քաղաքագէտ եւ պետական մարդ, Նուպար Բաշա իր արդարասիրութեամբ եւ քաղաքական խնդիրներու վրայ իր ուղիղ տեսութիւններովը Եւրոպիոյ պետական մարդոց ուշադրութիւնն եւ հիացումը գրաւած էր ։

«Նուպար Բաշայի նշանաբանն «արդարութիւնն» էր ։ Նա պետական հաղուագիւտ անձերէն մէկն էր, որ կը հաւատար թէ՝ «Արդարութիւնը» պէտք է յաղթանակէ եւ տիրէ ամեն տեղ ու ամէն ժամանակ ։ Իր անգղիացի բարեկամները, որ զինքը այնչափ գնահատած էին, կը չեշտէին անոր այս մասնաւոր յատկութիւնը ։

«Իբրեւ ընտանեաց հայր, ինչպէս կ'իմանանք, Նուպար Բաշա ընտանեսիրութեան տիպար մ'էր, բարի հայր մ'էր իր զաւակներուն համար, ընտիր եւ օրինակելի ամուսին մը, ընտանեկան

յարկը ամեն ինչ էր իրեն համար եւ հոն կը փնտռէր իր երջանկութիւնը ։

«Սակայն իբրեւ հայ, եւ իբրեւ ազգային անհատ—եւ ասոր վրայ է որ կուզենք առաւել եւս ծանրանալ—Նուպար Բաշա, ինչպէս կապացուցանեն իր բոլոր գործերը, մեր ամենէս շատ աւելի ազգասէր, եւ շատ աւելի հայրենասէր էր ։ Նա գուրգուրանօք կը սիրէր իր ազգը եւ անոր վերաբերեալ խնդիրներով ընդ միշտ կը չահագրգռուէր ։ Մանրամասնութեանց մէջ մտնել չենք ուզեր, սակայն դարձեալ Եւրոպական լրագիրներն են, որ մեզի կը տեղեկագրեն թէ՝ վերջին տարիներս Բարիզի մէջ հաբիւրաւոր հայեր Նուպար Բաշայի հոգածութեան ներքեւ կ'ապրէին ։ Աղքատ ազգային մը՝ որ անոր ներկայանար ձեռնունայն երբէք չէր մեկներ անոր ապարանքէն ։ Քանի՛ քանի ուսանող հայեր անոր կը պարտին իրենց դաստիարակութիւնը ։ Բայց բան մը որ մենք չափազանց կը սիրենք ու կը գնահատենք եւ որոյ համար Նուպար Բաշայի յիշատակն անմոռանալի պիտի մնայ մեր մէջ, այն է թէ՝ նա ճշմարիտ հայ մ'էր եւ իր հայ ըլլալն երբէք չ'էր ծածկեր, այլ իր գործերովն կը ջանար աւելի եւս փառաւոր ընծայել հայ անունը օտարաց առջեւ ։ Սոյն ազգային նախանձախնդրութեամբ էր, որ վերջին ազգային ցաւալի դէպքերու առթիւ այնչափ զգածուած էր, ինչպէս իր անգղիացի բարեկամներէն մեկը կը գրէր, «այս ցաւալի դէպքերը խիստ ծանրացան իր հոգւոյն վրայ եւ ծերացուցին զինքը. Նա խորապէս կը ցաւէր իր ազգին պատահած դժբաղդութեանց վրայ ։»

«Նուպար Բաշայի մահը ազգին մեծ կորուստ մ'է. եւ մենք ազգայինքս դառնապէս կ'ողբանք որ շատ շուտ կորսընցուցինք այս մեծ մարդը, որ կոչուած էր եւ կարող իր բարձր դիրքով տակաւին մեծ եւ անգնահատելի ծառայութիւններ մատուցանել իր հայրենիքին ։

«Իսկ մենք որ այս մեծ հայրենասէրը ճանչցած, եւ անոր համար միշտ մեծ հիացում ունեցած ենք, մեր պարտաւորութեան մէջ թերացած պիտի ըլլայինք, եթէ գոնէ քանի մը խօսքով այս վերջին յարգանքը չ'մատուցանէինք իր յիշատակին. եւ մեր խօսքը վերջացնելէ առաջ պիտի ըսենք մեր ազգայնոց, պիտի ըսենք մեր հայ երիտասարդներուն, թէ պէտք է սորվին սիրել իրենց ազգը, եւ ուր որ բաղդը զիրենք առաջնորդէ, եւ աշխարհիս ո'ր կողմն իսկ գտնուին, երբէք չ'ամչնան իրենց հայութիւնը խոստովանելու, այլ իրենց բարքով ու վարքով եւ ուղիղ գործերովն հայ անունը բարձրացնել ջանան, եւ այսպէս ընելու համար այս մեծ մարդուն, այս մեծ հայրենասէրին—Նուպար Բաշայի—օրինակին միայն հետեւին ։»

*
* *

Վերադառնանք Բուրգերու երկիրը, որ Նուպար Բաշայի հայրենիքը եղաւ և իր հանճարին բաղմաբիւր բարիքները վայելեց Եգիպտացին, ու տեսնենք թէ՝ ի՛նչ միջոց ընտրեց երախտագիտութիւն յայտնելու համար իր բարերարին ։

Հազիւ Նուպար Բաշայի մահուամբ առթուած սուգը կը փարատէր Եգիպտացուն սրտէն, հազիւ կառավարական շրջանակներու մէջ Նուպարի մեծագործութիւնները յեղեղուելէ դադրելու վրայ էին, և ահա առ յաւէտ անմահացնելու համար անոր յիշատակը, Եգիպտոս երախտագիտութեան զգացմամբ զեղուն, գեղեցիկ գաղափարը յղացաւ կանգնելու յիշակերտը Մեծին Նուպարի. յիշակերտ՝ որ աննման հայուն անստգիւտ հանճարը և արդարասիրութիւնը կը փառաբանէ ։

Լաւ կազմակերպուած մարմին մը հսկողութեան ներքև հանգանակութիւն մը բացուեցաւ և Եգիպտացին փութկոտ եռանդով մը և փափաքանօք մասնակցելով անոր,

կանգնուեցաւ հսկայ յիշատակարան մը Աղէքսանդրիոյ Ռիւ տ'Ալըմանեբի մշտադալար ու ծաղկալի պարտէզներուն մէջ, ուր ամեն անցորդ պիտի յիշէ ու հիանայ պետական մեծ հանճարին ու անհետացող հայու մտքին վրայ, որ ոչ եւս է թէև՝ բայց միշտ պիտի ապրի երախտագէտ սրտերու մէջ ։

Յիշատակարանի բացումը տարւոյս Յունիս ամսոյ 3ին տեղի ունեցաւ, որոյ մանրամասնութիւնները ներկայ հրատարակութեան երկրորդ մասը կը կազմեն ։

ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱՅԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Նուպար բաշա մէկ արու և երկու աղջիկ զաւակներ ունեցած է ։

ՊՕՂՈՍ ԲԱՇԱ. —Անդրանիկ զաւակն է Նուպարի՝ 1851ին ծնած ։

ՕՐ. ՆՈՅԵՄԻ ՆՈՒՊԱՐ. —Ամուսնացած է Լեւոն Պէյ Գաբամաճեանի հետ՝ և ութը տարիներ առաջ այրիանալով, այժմ Բարիզ կը բնակի ։

ՕՐ. ԶԻՊԱ ՆՈՒՊԱՐ. —Ամուսնացած է Վ. Տիգրան բաշա տ'Ապրօի հետ ։ 1889ին Տիկին Զիպա տ'Ապրօ Նաբօլիի (Իտալիա) մէջ մեռած է և գերեզմանը Գահիրէի Ս. Մինաս Ազգ. գերեզմանատան մէջ կը գտնուի ։

ԹՈՌՆԵՐԸ

Վսեմ. Պօղոս բաշա ամուսնացած է Տատեան Յովհաննէս Պէյի դուստր Օր. Մարի Տատեանի հետ ։

Տիկին Մարի Պօղոս բաշա Նուպար շատ խնամեալ դաստիարակութիւն մը ստացած է, և իր մայրենի լեզուէն զատ, քաջ գիտէ նաև մէկ քանի եւրոպական լեզուներ ։

Վ. Պօղոս Բաշա մէկ աղջիկ և չորս մանչ զաւակներ ունի ։

ԱՌԱՔԵԼ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ. — Վ. Պօղոս բաշայի անդրանիկը, Ցուրիխերիոյ մէջ աւարտած է իր ուսման ընթացքը ։ Ներկայ տարւոյ մէջ տեղի ունեցաւ Առաքել պէյի ամուսնութիւնը, Ասլանեան Գէորգ էֆէնտիի դուստր Օր. Նոյեմզարի հետ ։

Վսեմ. Պօղոս բաշա այս առթիւ 1000 ոսկի նուիրած է Գահիրէի մէջ նոր կառուցանելի վարժարանին ծախուցը յատկացուելու համար ։

ՕՐԻՈՐԴ ԵԻԱ ՆՈՒՊԱՐ. — Պօղոս բաշայի երկրորդ զաւակն է միամօր ։ Մասնաւոր խնամքով մը դաստիարակուած է և քաջ գիտէ ֆրանսերէն ու անգլիերէն լեզուներն, ու բաւական յաջողութեամբ կը խօսի իր մայրենի լեզուն ։

ԶԱՐԵՀ, ՎԱՀՐԱՄ ԵՒ ԱՍԼԱՆ Նուպարեան պէյերը այժմ եւրոպայի կարեւոր կրթարաններուն մէջ ուսման կը հետեւին ։ Իրենց մայրենի լեզուին դասաւանդութիւնը մասնաւոր ուսուցչի մը խնամոց յանձնուած էր, անոնց եւրոպա մեկնելէն յառաջ ։

ՕՐԻՈՐԴ ԻՆՃԻ (Marguerite) և ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆ տ'Ապրօ, Տիգրան բաշայի զաւակներն են ։ Օր. Ինճի մասնաւոր դասերով ուսած է և գիտէ անգլիերէն, ֆրանսերէն լեզուներն, իսկ Արամ Ստեփան Պէյ Անգլիա սկսած է իր ուսման ընթացքը և այժմ Բարիզի գլխաւոր Լիսէներէն մէկուն մէջ կ'ուսանի և այս տարի շատ փայլուն քննութիւն մը անցուցած է ։

ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ



ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ — MONUMENT DE NUBAR PACHA

Աղեքսանդրիա Ռիւ տ'Ալլըմանեը **1904** *Alexandrie Rue d'Allemagne*

ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ

ՄԱՍՆ Ա.

Աննկարագրելի չքեղութեամբ անցի անցաւ Նուպար Փաշայի յիշատակին համար կանգնուած արձանին բացման հանդէսը ։

Մեր մէջ ամենէն շատ կրկնըւած « յաւիտենապէս ապրիլ » նախադասութեան իմաստը՝ նմանօրինակ հանդէսով մը միայն կրնայ է բացատրել ամէն անոնց՝ որոնք կուզեն գիտնալ թէ՝ ի՞նչ կը նշանակէ յաւիտենականութեան մէջ ապրիլը ։

Ուրբաթ օր մ'էր Յունիս 3ը . Եգիպտոսի մայրաքաղաքը երկինքը արտակարգ գեղեցկութիւն մը կը սփռէր ամէն արարուածի վրայ, ուր Նուպարի մէկ ծնունդ տեսարանը կար պատրաստած ։

Եգիպտական երկու մայրաքաղաքներուն մէջ ալ — Գահիրէ և Աղեքսանդրիա — բազմութիւն մը կը սկսէր զարթնուլ անձկութեամբ մը ...

Հարիւրաւոր կառքեր իրենց խլացուցիչ դղրդիւններովը օդը լեցնելով Գահիրէի կայարանը կը փոխադրէին հանդիսականներու անհամար բազմութիւնը, որոնց պետական մեծ պաշտօնատարներ ու կախուած ...

Մինչդեռ կայարանը ալ ...

Թայի հանդիսականներ, որոնց ... անհամար բազմութիւնը ...



ՅՈՒՇԱՐՁԱՆ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ — MONUMENT DE [illegible] PACHA

[illegible] Alexand[illegible] [illegible]magne

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ 3 ՅՈՒՆԻՍ 1904

ՄԱՍՆ Բ.

Աննկարագրելի չքեղութեամբ տեղի ունեցաւ Նուպար Փաշայի յիշատակին համար կանգնուած արձանին բացման հանդէսը ։

Մեր մէջ ամենէն շատ կրկնուած « յաւիտենապէս ապրիլ » նախադասութեան իմաստը՝ նմանօրինակ հանդէսով մը միայն կարելի է բացատրել ամէն անոնց՝ որոնք կուզեն գիտնալ թէ՝ ի՞նչ կը նշանակէ յաւիտենականութեան մէջ ապրիլը ։

Ուրբաթ օր մ'էր Յունիս 3ը ։ Եգիպտոսի մշտակապոյտ երկինքը արտակարգ զուարթութիւն մը կը սրսկէր ամէն սրտերու մէջ, ուր Նուպարի մէկ թարմ յիշատակը կար պահուած ։

Եգիպտական երկու ոստաններուն մէջ ալ — Գահիրէ և Աղեքսանդրիա — ընդհանուր շարժում մը կը տիրէր ։ Իրական անմահութիւնը երգողներու անվերջանալի երթուգարձն էր այս ։ Հարիւրաւոր կառքեր իրենց խլացուցիչ դղրդիւններովը օդը թնդացնելով Գահիրէի կայարանը կը փոխադրէին հանդիսադիրներու անհամար բազմութիւնը, որոնք պետական մեծ մարդուն անգամ մը եւս խորին յարգանք մատուցանելու փափաքէն մղուած էին ։

Միեւնոյն շարժումը տեղի կ'ունենար Աղէքսանդրիոյ մէջ ալ, ուր Ռիւ տ'Ալըմաների կանաչազարդ պարտէզներուն մէջ կը բարձրանար պղնձեայ հոյակապ և գեղակերտ քանդակածուն Նուպարի, գործ հռչակաւոր քանդակագործ Պ. Տընի Բիէշի, որուն ի տես, մարդ կարող էր սխալիլ պահ մը թէ՝ արդարև Նուպար կենդանի է ։

Բացի համակիրներէ, որոնք թիւ չ'ունէին, հանդիսավայրը բռնուած էր պաշտօնական անձնաւորութիւններու անհաշուելի բազմութեամբ

մը, որոնք մի առ մի անուանել անկարելի պիտի ըլլայ ։

Ն. Բ. Խտիվը կը ներկայացնէր Նախարարաց Խորհրդոյ Նախագահ Վըսեմ. Մուսթաֆա բաշա Ֆէհմի, շրջապատուած նախարարական մարմնոյ բոլոր անդամներէն ։ Դիւանագիտական և հիւպատոսական մարմնոյն գրեթէ բոլոր ներկայացուցիչներն ալ, ի գլուխ ունենալով Լորտ Քրօմըրը, հանդիսավայրին մէջ իրենց յատուկ տեղերը գրաւած էին ։ Դատաւորներու և փաստաբանական մարմնոյն կարևոր ներկայացուցիչները իրենց կարգին ներկայ էին. հոն էին նաև տեղական մամլոյ բոլոր ներկայացուցիչները և երկու քաղաքաց ականաւոր անձնաւորութիւնները և անհամար բազմութիւն մը ամէն ազգէ ։

Կարելի չէ մոռնալ իգական սեռին ներկայութիւնն ալ, որ պարագային յարմար չքնաղ ու մին միւսը գերազանցող արդուզարդովը կուգար բիւրապատկել հանդիսին շուքն ու փայլը ։

Հինգ ճառեր արտասանուեցան պաշտօնական երևելի անձնաւորութիւններու կողմէ, որոնց ամփոփումը կ'ընենք յետագայ սիւնակներուն մէջ, ընթերցողին թողլով հիանալ պետական այն մեծ հանճարին վրայ որ պատիւը եղաւ իր ազգին և իրեններուն ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա.

Յիշատակարանի Յանձնախումբին Նախագահ՝

Վ. ՏՐ. ՇԷՅՍ ՊԷՅ

Վսեմաշուք Տիարք,

Տիկնայք և Պարոնայք

Նուպար Բաշայի բազմաթիւ հիացողները՝ և Եգիպտոսի, ինչպէս նաև Եւրոպայի մէջ ունեցած բարեկամները, մտածեցին որ իր յիշատակին կանգնուած յիշատակարան մը ամենուն մտքին մէջ պէտք էր կենդանի պահէր Եգիպտոսի պատմութեան մէջ կատարած դերը և մատուցած նշանաւոր ծառայութիւնները. Այս եղաւ նպատակը այն Յանձնաժողովին, որուն նախագահութիւնը ինծի յանձնելու պատիւն ինծ ըրին, և ահա այդ իրաւունքով է որ թոյլտուութիւն կը խնդրեմ ձեզմէ՝ զինքը չ'ճանչցողներուն համար քանի մը խօսքով յիշեցնելու թէ՝ ի'նչ եղաւ Նուպար Բաշա և ի'նչ եղաւ Եգիպտոսի այս գեղեցիկ երկրին մէջ իր կատարած գործը ։

1844 ին, իր պաշտօնավարութեան սկսելէն մինչև 1894ի իր վերջին նախարարապետութիւնը, կէս դարու այդ ամբողջ ժամանակամիջոցին, այլազան պաշտօններ վարեց՝ սկզբնաւորութեան ատենները՝ Մուհամմէտ Ալի բաշա Փոխարքային երկրորդ քարտուղարի համեստ պաշտօնէն սկսեալ մինչև նախարարաց խորհրդոյ նախագահութիւնը զոր տասը տարի առաջ վերջին անգամ ըլլալով յանձնեց իրեն Ն. Բ. Խտիվին վստահութիւնը ։ Հետզհետէ եղաւ Վիէննայի և Պերլինի մէջ կառավարութեան ներկայացուցիչ, Առողջապահական պաշտօնէութեանց Պետ, մաքսի (transit) և երկաթուղիներու Տնօրէն, Առևտրական, Արդարութեան, Արտաքին գործոց Նախարար և Նախարարաց խորհրդոյ Նախագահ և այսչափ պէսպէս հանգամանքներ ունեցող այդ բոլոր պաշտօններուն մէջ՝ չ'կայ բնաւ պաշտօն մը, յորում իր գործունէութեան խորունկ հետքը թողուցած չ'ըլլայ ։

Հրաշալի յայտնատեսութեամբ և իւրացուցման տաղանդով օժտուած, միակ փայլակնանման ակնարկով մը գիտէր ըմբռնել ամեն բանի տկար կողմե-

LES DISCOURS

I.

Le Président du Comité du Monument

E. Dr. Schiess Bey

Excellences, Mesdames et Messieurs,

Les nombreux admirateurs de Nubar Pacha et les amis qu'il a laissés en Egypte, comme en Europe, ont pensé que le rôle qu'il a joué dans l'histoire de l'Egypte et les services signalés qu'il a rendu à son pays devaient se rappeler au souvenir de tous par un monument élevé à sa mémoire. Tel a été le but du Comité dont on m'a fait l'honneur de me confier la présidence, et c'est à ce titre que je vous demande la permission de rappeler en quelques mots, ce que fut Nubar Pacha et quelle fut son œuvre en ce beau pays d'Egypte.

Depuis son entrée au service en 1844 jusqu'à son dernier Ministère de 1894, durant cette période de tout un demi siècle, il a occupé les postes les plus divers, depuis le modeste emploi, à ses débuts de 2me secrétaire du Vice-Roi Mohammed Aly Pacha, jusqu'à la présidence du conseil des Ministres, qui lui fut confiée pour la dernière fois, il y a diz ans à peine, par la confiance de Son Altesse le Khédive. Il a été successivement agent du Gouvernement à Vienne et à Berlin, chef des Services Sanitaires, Directeur du Transit et des Chemins de fer, Ministre du Commerce, des Travaux publics, de la justice, des Affaires Etrangères et Président du Conseil des Ministres; et de toutes ces fonctions de natures si variées, il n'en est pas une ou il n'ait laissé la profonde empreinte de son passage.

Doué d'une intuition et d'une talent d'assimilation merveilleux, il savait saisir en un éclair les points faibles et les défauts de toutes choses, et les remèdes lui appa-

րը եւ թերութիւնները, եւ՝ դարմանը առժամայն յայտնի կ'երեւէր իր աչքերուն այնպիսի պայծառատեսութեամբ մը եւ յստակամտութեամբ մը որ իրեն մէջ ձիրք մըն էին եւ ոյժ մը ։ Աշխատութեան մէջ եռանդուն եւ յամառ, իր բոլոր ձեռնարկներուն մէջ անզուսպ ուժգնութիւն մը գործածող, չ'եղաւ երբէք որ մարմնաւոր կամ մտաւոր ամենափոքր հանգիստը վայելել ուզէր՝ մինչեւ որ հասնէր իր առաջադրած նպատակին ։ Իր բանակցութեանց մէջ համոզման տաղանդ մը ի յայտ կը բերէր եւ անոր օժանդակ՝ հաւանեցուցման զօրութիւն մը եւ պերճախօսութիւն մը՝ որոնք այնչափ յանկուցիչ էին որ ամենէն կանխապաշարուած միտքն անգամ չէր կարող անոնց դիմադրել ։

Ահա այսպէս յաջողեցաւ այն ամենափափուկ պաշտօններուն մէջ զոր իրեն յաջորդական Վեհապետները իրեն յանձնեցին, ահա այսպէս Աբբաս փաշա փոխարքային կողմանէ բանակցելով յաջողութեան հասցուց Եգիպտոսի մէջ առաջին երկաթուղւոյ շինութիւնը՝ որուն գաղափարը ինքը թելադրած էր, եւ ա՛յսպէս ձեռք բերաւ 1866ի եւ 1867ի ֆէրմանները՝ որոնք ուղղակի յաջորդութեան հրամանը եւ Խտիվի տիտղոսը կը շնորհէին Ն. Բ. Իսմայիլ փաշայի, եւ անկէց զատ կ'արտօնէին անոր ներքին կազմակերպութեան կանոններ հաստատել եւ մաքսային թղթատարական եւ այլ պայմանագրութիւններ կնքել, որով իրօք Եգիպտոս կ'ստանար վարչական ինքնօրինութիւն ։

Դարձեալ ինքը եղաւ որ 1864ին Բարիզի մէջ Սուէզի Ընկերութեան հետ ունեցաւ յոգնաջան եւ փափուկ բանակցութիւններ, որոնց արդիւնքը եղաւ շահեցնել Եգիպտոսի բան մը որ ամենէն աւելի մեծ փափաքն էր եգիպտական կառավարութեան, այն է բարձումը տարապարհակ աշխատութեան՝ զոր Ջրանցքին ընկերութիւնը մինչեւ այն ատեն հարկադրած էր եւ որուն բեռը այնչափ տաժանելի կերպով կը ծանրանար բնիկներուն վրայ ։

Այնուհետեւ եկաւ իր ասպարէզին ամենէն կարեւոր եւ ամենէն արդիւնաւոր գործը, այն գործը զոր յղացած էր ինքը արդարութեան բաղձանքէն առաջնորդուած, կ'ուզեմ ըսել դատական բարենորոգութիւնը ։

Այդ իրագործելու համար, պարտաւորեցաւ բանակցութեան մտնել Եւրո-

raissaient aussitôt avec une clairvoyance et une lucidité qui étaient chez lui un don et une force.

Ardent et tenace au travail, mettant dans toutes ces entreprises une énergie indomptable, jamais il n'eut consenti à s'accorder le moindre repos de corps ou d'esprit, qu'il n'eut atteint le but poursuivi. Dans ses négociations il déployait un talent de persuasion, servi par une conviction et une éloquence si entraînantes, que l'esprit le plus prévenu ne pouvait lui résister.

C'est ainsi qu'il réussit dans les missions les plus délicates que ses Souverains successifs lui confièrent, qu'il négocia pour le Vice-Roi Abbas Pacha la construction du premier Chemin de fer en Egypte, dont il avait suggéré l'idée, et qu'il obtint les Firmans de 1866 et de 1867, accordant à Son Altesse Ismaïl Pacha, l'ordre de succession directe et le titre de Khédive, et l'autorisant en outre à faire des règlements d'organisation intérieure et à conclure des conventions douanières, postales etc., ce qui donnait, en fait, à l'Egypte, l'autonomie administrative.

Ce furent encore les laborieuses et délicates négociations conduites à Paris en 1864 avec la Compagnie de Suez, qui aboutirent à l'arbitrage de l'Empereur Napoléon III, donnant gain de cause à l'Egypte sur le point qui tenait le plus au cœur du Gouvernement, celui du rachat de la corvée, que la Compagnie du Canal avait employée jusque-là dans ses travaux et dont le poids se faisait si lourdement sentir sur la population indigène.

Puis ce fut l'œuvre la plus importante et la plus fertile de sa carrière, celle qu'il avait conçue dans sa soif de justice; je veux parler de la Réforme Judiciaire.

Pour la réaliser, il eut à négocier avec les divers Gouvernements d'Europe, visi-

պայի զանազան կառավարութեանց հետ հետզհետէ այցելելով բոլոր մայրաքաղաքները, կանխապաշարեալ եւ հակառակորդ մտքերու դէմ մաքառելով, միջազգային յանձնաժողովներու նախագահելով, վերջապէս ինքզինքը բիւրապատկելով եւ այնպիսի անսահման ջանք մը ի գործ դնելով՝ որուն ընդունակ էր իր հուժկու կամքը միայն ։ Եւ տասը տարուան յամառ աշխատութենէ մը վերջը միայն՝ իր ձեռք առած գործին արդարութեան վրայ ունեցած հաւատքովը ամրապնդուած, վերջապէս ուրախութիւնը վայելեց իր ջանքերը յաջողութեամբ պսակուած տեսնելու. խառն դատարանները հաստատուեցան 1876 Փետր. 1ին ։

Այս հաստատման յառաջ բերած արդիւնքին ո՛րչափ մեծ ըլլալուն վերահասու ըլլալու համար, պէտք է որ մարդ ճանչցած ըլլայ Եգիպտոսը խառն դատարանաց հաստատումէն առաջ եւ ականատես եղած ըլլայ՝ մեր մէջէն շատերուն նման՝ այն զոհուբոհին որ կը տիրէր այն ժամանակ դատարաններու տարապայման բազմութեան պատճառաւ ։

Խտիվ Իսմայիլ փաշայի եւ իր նախարարին փառքը պիտի մնայ միշտ դատական բարենորոգմամբ իրաց այդ վիճակին վերջ մը տալու գործը ։

Այդչափ բազմարդիւն կեանքի մը վրայ արագ տեսութիւն մը իսկ թերի պիտի ըլլար, եթէ չ'յիշատակէի թէ ինչ սաստիկ հոգածութիւն ցոյց կուտար Նուպար փաշա երկրագործութեան վերաբերեալ ամէն գործերու, որոնց յառաջդիմութեան հետամուտ եղաւ անդադար, եւ եթէ չ'յիշէի թէ ի՛նչ խանդավառութեամբ ընդունեցաւ եւ քաջալերեց բոլոր ուժովը, ջուրերու բարւոք կիրարկման եւ Նեղոսի ջրամբարներուն համար ճարտարագէտ շինողներու յղացած հրաշալի ծրագիրները ։

Մեր մէջէն քանիներ քանի անգամ լսած են իր բերնէն սա խօսքը որ՝ իր ճշգութեամբը՝ իր մտածումը կը թարգմանէր եւ ամբողջ ծրագիր մը կը բովանդակէր. « Տուէ՛ք, կ'ըսէր, տուէ՛ք Եգիպտոսի ջուր եւ արդարութիւն, եւ երկիրը երջանիկ եւ բարգաւաճ կըլլայ ։ »

Այդ կրկին բաղձանքին հասած ենք այսօր ։ Արդարութենէն յետոյ՝ կը մնար աւելի առատօրէն ջուր մատակարարել հողագործութեան, եւ ահա ինչ որ վերջերս իրագործուեցաւ Ասուանի հրաշակերտ Ջրամբարին շինութեամբը, իր մեծութեամբը միակ գործ աշխարհիս վրայ,

tant successivement toutes les Capitales, luttant contre des esprits prévenus et hostiles, présidant des Commission Internationales, se prodiguant enfin et dépensant un effort immense, dont sa forte volonté était seule capable. Et ce n'est qu'après plus de dix années d'un travail opiniâtre, dans lequel il était soutenu par sa foi dans la justice de sa cause, qu'il eut enfin la joie de voir ses efforts couronnés de succès: Les Tribunaux Mixtes furent installés le 1er Février 1876.

Pour bien se rendre compte de la grandeur du résultat obtenu par cette création, il faut avoir connu l'Egypte avant l'institution des Tribunaux Mixtes et avoir été témoin, comme nombre d'entre nous l'ont été du chaos qui exister jusqu'alors en Egypte par suite de la multiplicité des juridictions.

Ce sera la gloire du Khédive Ismaïl et de son Ministre d'avoir mis fin à cet état de choses, par la création de la Réforme judiciaire.

Un exposé même rapide de cette existence si remplie serait incomplet si je n'y mentionnais l'intérêt intense que Nubar Pacha portait à toutes les choses de l'agriculture, dont il a constamment poursuivi les progrès, et si je ne rappelais avec quel enthousiasme il accueillit et encouragea de toutes ses forces, les merveilleux projets des ingénieurs pour l'aménagement des eaux et les réservoirs du Nil.

Nombre d'entre nous l'ont maintes fois entendu répéter cette phrase qui, dans sa concision, traduisait admirablement sa pensée et résumait tout un programme: «Donnez: disait-il, donnez à l'Egypte de l'eau et de la justice, et le pays sera heureux et prospère.»

Ce double vœu est atteint aujourd'hui. Après la Justice, il restait à donner plus d'eau à l'agriculture; et c'est ce que vient de réaliser le merveilleux Réservoir d'Assouan, cet ouvrage unique au monde dans sa grandeur, dont le Gouvernement de S. A. le Khédive a doté l'Egypte

տով Բ. Խտիվին կառավարութիւնը օժտեց երախտապարտ Եգիպտոսը եւ որ ցոյց տուաւ երկրին բարգաւաճութեան աննախընթաց անզուգական աստիճան մը, որուն ականատես կ'ըլլանք սքանչացմամբ։

Ահա լայն գիծերով եւ վեր ի վերոյ ամփոփեցի Նուպար փաշայի ասպարէզին ամենէն աչքի զարնող գործերը. այս արագ յիշատակութիւնները ցոյց պիտի տան այն ծառայութեանց կարեւորութիւնը, զոր պետական մարդը մատոյց իր երկրին՝ կէս դարէն աւելի ժամանակամիջոցի մէջ այնչափ փրկաւէտ ազդեցութիւն մը գործելով Եգիպտոսի վրայ։ Ինչ որ կ'իշխէ իր գործին մէջ՝ ամենէն առաջ իր երկրին եւ Ֆէլլահին համար ունեցած խորին սէրն է եւ որ եւ է անիրաւութեան նկատմամբ իր զգացած ըմբոստացման բնազդական զգացումը. ահա առոնցմով ներշնչուած կը տեսնենք իր բոլոր գործերը, թէ՛ երբ կը ջանար ջնջել տարապարհակ աշխատութիւնները, թէ՛ երբ անխնայ կ'աշխատէր ձեռք բերելու համար այն ինչ որուն՝ իրեն կարծիքովը՝ երկիրը ամենէն աւելի պէտք ունէր. «Ապահովութիւն Արդարութեան միջոցաւ. — այն արդարութիւնը առանց որուն կ'ըսէր, կառավարութիւն կարելի չէ։» Ահա այսպիսին է Նուպար փաշայի գործը. այդ գործը այժմ կը վերաբերի պատմութեան. անոր մէջ արձանագրուած պիտի մնայ գեղեցիկ էջով մը՝ զոր նոր սերունդները պիտի կարդան միշտ շնորհապարտ եւ յարգալից սրտով։

Այլեւս միայն կը մնայ ինձ, Վսեմաշուք Տիարք, Տիկնայք եւ Պարոնայք, Յանձնաժողովիս կողմանէ մեր ամենայարգալից երախտագիտութիւնը մատուցանել Բ. Խտիվին, որ բարեհաճեցաւ իր ամենաբարձր աջակցութիւնը շնորհել մեզ եւ այսպէս մեր յաջողութիւնը ապահովեց։

Նմանապէս շնորհակալ եմ Ն. Բարձրապատուութեան կառավարութեան որ իր ներկայացուցիչներովը մասնակցեցաւ իրենց վաղեմի ընկերոջ եւ աշխատակցին մատուցուած յարգանքին։

Վերջապէս մատուցանելով մեր շնորհակալիքը Քաղաքապետութեան եւ Քաղաքին՝ որք Աղեքսանդրիոյ հրապարակներէն մին մեր տրամադրութեան ներքեւ դրին, յանուն Յանձնաժողովոյ պատիւ ունիմ յանձնել իրենց սոյն գե-

reconnaissante, et qui a fait connaître au pays un degré de prospérité sans précédent, dont nous sommes les témoins émerveillés.

Je viens de résumer à grands traits les faits les plus saillants de la carrière de Nubar Pacha; ces rapides citations auront montré l'importance des services rendus à son pays par l'homme d'Etat, qui dans l'espace de plus d'un dimi-siècle a exercé une si salutaire influence sur l'Egypte. Ce qui domine dans son œuvre, c'est d'abord son amour profond pour son pays et pour le fellah, et le sentiment instinctif de révolte qu'il ressentait pour toute injustice; tous ses actes en ont été inspirés, aussi bien lorsqu'il s'efforçait d'abolir les corvées que lorsqu'il se dépensait sans compter pour obtenir ce dont, selon lui, le pays avait le plus besoin: « La sécurité par la Justice, – cette Justice sans laquelle, a-t-il dit, il n'est pas de Gouvernement possible.»

Telle est l'œuvre de Nubar Pacha; elle appartient maintenant à l'histoire elle y est inscrite en une belle page que la postérité lira toujours avec reconnaissance et respect.

Il me reste Excellences, Mesdames et Messieurs à présenter au nom du Comité, l'expression de notre plus respectueuse reconnaissance à Son Altesse le Khédive, qui a daigné nous accorder son très haut appui et a ainsi assuré notre succès.

Je remercie également le Gouvernement de Son Altesse pour la part prise par ses représentants à l'hommage rendu à leur ancien collègue et leur collaborateur.

En offrant enfin nos remerciements à la Municipalité et à la Ville, qui ont mis, à notre disposition une de places d'Alexandrie, j'ai l'honneur au nom du Comité de leur faire remise de cette belle statue, ne

ղեցիկ արձանը, բնաւ տարակոյս չունենալով որ պիտի ջանան գուրգուրանքով հսկել Եգիպտոսի մէկ հաւատարիմ եւ անձնուէր սպասարկուին յիշատակին կանգնուած յիշատակարանի մը վրայ։

Բ.

Աղեքսանդրիոյ Կառավարիչ

ՎՍԵՄ. ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ ՍԸՏԳԻ

Այս ամենէն յետոյ՝ զոր ամենքս ալ լսեցինք, համառօտիւ պիտի պատասխանեմ Յանձնաժողովին տեղեկագրին, որ իր նախագահին բերնով այնքան պերճախօսութեամբ նկարագրեց մեզ Նուպար բաշայի կեանքը եւ փայլուն ասպարէզը։

Այն հոյակապ պետական մարդը, որուն դէմքը մեր աչքերուն առջեւ կը կենդանացնէ այս արձանը, անտարակոյս ամենամեծ ծառայութիւններ մատոյց Եգիպտոսի։

Իր անունը սերտիւ կապուած է մեր երկրին ժամանակակից պատմութեան, եւ բաւական է որ մարդ՝ Մեծն Մուհամէտ Ալիի թուականէն սկսեալ մինչեւ իմ Բարձրաշնորհ վեհապետիս՝ Բ. Խտիվին այժմեան վարչութիւնը՝ իր պատմութեան ամփոփումը կարդայ, կը համոզուի որ Նուպար բաշա արեւելքի ամենէն մեծ մարդերէն մէկն էր։

Հաճոյքով կը տեսնեմ որ երկիրը պահած է Նուպար բաշայի՝ իր բազմաշխատ գոյութեան մէջ մատուցած այդ ծառայութեանց յիշատակը, եւ թէ միակամ համահաճ եռանդով ցոյց տուաւ անոր իր երախտագիտութիւնը՝ անոր յիշատակին կանգնուած սոյն արձանին հաստատման մասնակցելով։

Քաղցր է ինձ աւելցնել որ այն գործը զոր կը կատարենք այսօր՝ ամենաբարձր աջակցութիւնը ստացած իմ Օգոստափառ տիրոջս, Ն. Բ. Խտիվի կառավարութեան, որ բարեհաճեցաւ իր մեծանուն գերդաստանին մէկ պարկեշտ սպասարկուին նկատմամբ տածած զգացումներուն այս թանկագին հաւաստիքը տալ եւ իր կողմանէ սոյն արարողութեան ներկայացուցիչ կարգել Նախարարաց Խորհրդոյն իր յոյժ նշանաւոր Նախագահը։

Մասնաւորապէս բարեբախտ կը համարիմ զիս որ՝ պաշտօնիս հանգամանքովը՝ անուանուած եմ իբրեւ ընդունող սոյն գեղեցիկ յիշատակարանին, որ ձօն-

doutant pas qu'elles n'aient à cœur de veiller avec sollicitude sur un monument élevé à la mémoire d'un fidèle et dévoué serviteur de l'Egypte.

II.

Gouverneur d'Alexandrie

S. E. Mahmoud Pacha Sidky

Après ce que nous venons d'entendre tous, je repondrai brièvement au rapport du Comité, qui par le porte-voix de son Président vient de nous retracer, avec tant d'éloquence, la vie et la brillante carrière de Nubar Pacha.

L'éminent homme d'Etat dont cette statue fait revivre, à nos yeux, la figure, a rendu incontestablement de grands services à l'Egypte. Son nom est intimement lié à l'histoire contemporaine de notre pays et il suffira de lire le recueil de son histoire depuis l'époque du Grands Mohammed Aly jusqu'au règne actuel de S. A. le Khédive, mon gracieux Souverain, pour se convaincre que Nubar Pacha était un des plus grands hommes de l'Orient.

Je constate avec plaisir que le pays a gardé le souvenir de ces services rendus par Nubar Pacha durant sa laborieuse existence et qu'il a été unanime à lui témoigner sa reconnaissance en participant à l'érection de cette statue élevée à sa mémoire.

Je me plais à ajouter que l'œuvre que nous inogurons aujourd'hui a reçu le très-haut appui du Gouvernement de Son Altesse le Khédive, Mon Auguste Maître, qui a daigné donner ce précieux témoignage de ses sentiments pour un loyal serviteur de toute Son illustre Famille et qui a daigné aussi se faire représenter à cette cérémonie par Son très distingué Président du Conseil des Ministres.

Je suis particulièrement heureux d'être désigné par mes fonctions pour recevoir ce beau monument dédié au Ministre qui a contribué longuement à la fonda-

ուած է այն նախարարին որ երկար ատեն նպաստեց քաղաքապետութեան հաստատման, եւ ահա քաղաքապետութեան եւ քաղաքին անունովը կ'ընդունիմ ատոր յանձնումը եւ Յանձնաժողովին կը մատուցանեմ մեր բովանդակ շնորհապարտութեան հաւաստիքը այն թանկագին պարգեւին համար որ Աղեքսանդրիոյ համար զարդարանքի նոր տարր մը պիտի ըլլայ եւ որուն կատարեալ ճարտարութեամբ յօրինուածը պատիւ կը բերէ իր յօրինչին։

Ի վերջ բանից, վսեմաշուք Տէր, Տիկնայք եւ Պարոնայք, թոյլ տուէք ինձ որ շատ անկեղծօրէն շնորհակալ ըլլամ ամէն անոնց որ իրենց ստորագրութեամբ մասնակցեցան սոյն յիշատակարանի կանգնմանը, որուն բացման հանդիսութիւնը՝ որուն ուրախութեամբ ներկայ կը գտնուինք այսօր՝ յաւիտեանս անմոռաց պիտի մնայ մեր քաղաքին տարեգրոց մէջ։

Յանուն Աղեքսանդրիոյ բոլոր բնակչաց, կը խնդրեմ Ն. Բ. Խտիվին Վսեմ. Ներկայացուցչէն, Նախարարաց Խորհրդոյ Նախագահէն, որ բարեհաճի Օգոստափառ Վեհապետիս մատուցանել մեր խորին յարգանաց եւ անկեղծ շնորհակալեաց հաւաստիքը։

Գ.

Խառն Դատարանաց Վերաքննիչ Ատենին Նախագահ՝

Պ. ՏԸ ՔՕՐԻՑՄԻՉ

Տեարք,

Յանուն Եգիպտոսի Խառն Դատարանաց մարմնոյն, կուգամ՝ այս յիշատակարանին դիմաց, Նուպար Բաշայի յիշատակին վերստին նուիրել մեր մեծարանաց եւ երախտագիտութեան հարկը։

Ոչ ոք չէ մոռցած եւ երբէք չ'պիտի մոռնայ որ ինքը եղաւ Եգիպտոսի մէջ դատական բարենորոգման գլխաւոր հիմնադիրը, եւ թէ ի'նչպիսի յարատեւ լուսամիտ ջանքերով ամէն արգելքներու յաղթեց՝ իր գործին կատարումը ձեռք բերելու համար։

Իրեն համար՝ լաւ գործադրուած եւ լաւ բաշխուած Արդարութիւնը հիմնական խարիսխներէն մին կը կազմէր որ եւ է ընկերային կազմակերպութեան եւ պայմանը՝ երկրի մը թէ ամէն բարոյական յառաջդիմութեան եւ թէ նիւթական ամէն բարգաւաճութեան։

tion de la Municipalité; et c'est au nom de celle-ci et de la ville que j'ai l'honneur d'en prendre livraison et d'offrir au Comité l'expression de toute notre gratitude pour le don précieux qui sera un élément nouveau d'embellissement pour Alexandrie et dont la parfaite exécution fait honneur a son auteur.

En terminant, Excellence, Mesdames et Messieurs, permettez-moi de remercier très sincèrement tous ceux qui ont contribué par leur souscription à l'érection de ce monument dont la cérémonie d'inauguration à la quelle nous avons le plaisir d'assister aujourd'hui, restera à jamais mémorable dans les annales de notre ville.

Au nom de tous les habitants d'Alexandrie je prie S. E. le Représentant de S. A. le Khédive et Président du Conseil des Ministres de vouloir bien transmettre aux pieds de mon Auguste Souverain l'expression de notre profond respect et de nos sincères remerciements.

III.

Président de la Cour d'Appel Mixte

M. de Korrizmics

Messieurs,

Au nom du Corps de la Magistrature Mixte d'Egypte je viens, en face de ce monument, renouveler à la mémoire de Nubar Pacha, notre tribut d'hommages et de reconnaissance.

Nul n'a oublié et n'oubliera jamais qu'il a été le principal fondateur de la Réforme Judiciaire en Egypte, et par quels efforts persévérants et éclairés il a triomphé de tous les obstacles pour arriver à l'accomplissement de son œuvre.

Pour lui, la Justice bien administrée et bien distribuée formait une des bases fondamenteles de toute organisation sociale et la condition de tout progrès moral, comme de toute prospérité matérielle d'un pays.

Գիտէք, Տեարք, թէ իր այդ կարծիքը սխալ չէր։ Շնորհիւ դատական բարենորոգման եւ այն ապահովութեան զոր կ'ընծայէր բոլորին շահերուն, գործերու վերաբերեալ բարքերը մաքրուեցան, վարկը բարձրացաւ եւ զարգացաւ եւ նշանակելի զարկ մը կրցաւ տրուիլ հողագործական ճարտարարուեստական եւ առեւտրական ձեռնարկներու։

Նուպար Բաշայի պայծառատես բաղձանքը հասաւ ուրեմն առաջադրուած նպատակին։

Խառն դատարանաց դատաւորները՝ զոր միշտ իր համարումովը պատուեց, կրցան շուրջ երեսուն տարիներէ ի վեր իրենց պարտքը կատարել, եւ անշուշտ բնաւ ձայն մը չ'պիտի բարձրանայ անոր օգտակարութիւնը հերքելու համար։

Անգամ մը եւս ողջունենք ուրեմն, Տեարք, մեծ քաղաքացին, հոյակապ նախարարը որ պատմութեան մէջ պիտի ժառանգէ Եգիպտոսի մէջ Արդարութեան վերահաստատչի արժանավայել տիտղոսը։

Դ.

Նախարարաց Խորհրդոյ Նախագահ

Վ. ՄՈՒՍԹԱՖԱ ՓԱՇԱ ՖԷՀՄԻ

Ն. Բ. Խտիվը, իմ Օգոստափառ Տէրըս, իր բոլոր գերդաստանին մէկ հաւատարիմ սպասարկուին նկատմամբ իր զգացմանցը ի հանդէս, բարեհաճեցաւ այս հանդիսութեան մէջ զինքը ներկայացնելու պաշտօնը յանձնել ինձ։

Կառավարութիւնը, որուն այժմեան անդամները մեծաւ մասամբ իր աշխատակիցները եղած են, ինքն ալ իր կողմէն փափաքեցաւ ընկերակցիլ այն մեծարանաց զոր այսօր կը մատուցանէք ողբացեալ Նուպարի յիշատակին։

Կը շնորհաւորեմ զձեզ այս գեղեցիկ ձեռներէցութիւնը ունենալնուդ համար, զոր կ'արդարացնեն այն ծառայութիւնները զորս հիմա յիշեցին ձեզի, եւ որոնց յիշատակը անջինջ պիտի պահէ այս գեղեցիկ արձանը զոր կը բանանք։

Vous le savez, Messieurs, il ne s'est pas trompé. Grâce à la Réforme judiciaire et à la sécurité qu'elle assurait à tous les intérêts, les mœurs des affaires se sont épurées, le crédit s'est relevé et développé et un remarquable essor a pu être donné aux entreprises agricoles, industrielles et commerciales.

La sollicitude clairvoyante de Nubar Pacha a donc atteint le but poursuivi.

La Magistrature des Tribunaux Mixtes qu'il a toujours honorée de sa considération, a pu remplir sa tâche depuis bientôt trente ans, et aucune voix ne s'élèvera certainement pour en contester l'utilité.

Saluons donc encore une fois, Messieurs, le grand citoyen, l'éminent ministre qui portera dans l'histoire le titre légitime de Restaurateur de la Justice en Egypte.

IV.

Le Président du Conseil des Ministres

S. E. Moustapha Pacha Fehmy

Son Altesse le Khédive, mon Auguste Maître en témoignage de Ses Sentiments pour un fidèle serviteur de toute Sa Famille, a daigné me charger de Le représenter à cette cérémonie.

Le Gouvernement, dont les membres actuels ont pour la plupart, été ses collaborateurs a tenu, de son côté, à s'associer à l'hommage que vous rendez aujourd'hui à la mémoire du regretté Nubar.

Je vous félicite d'avoir pris cette initiative heureuse, justifiée par les services éminents qui viennent de vous être rappelés, et dont le beau monument que nous inaugurons perpétuera le souvenir.



ԱՐՁԱՆԻՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ
Աղեքսանդրիա 3 Յունիս 1904

37

Ե.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

[illegible]

V.

REMERCIEMENT

DE

[illegible] Pacha Nubar

[illegible] et Messieurs,

Lorsque [illegible] du siècle dernier, en 1842, [illegible] le souvenir nous réunit [illegible] en Egypte, c'est à Alexandrie [illegible] commença sa brillante carrière. [illegible] encore, il venait de [illegible] ses études et n'avait que 17 ans à peine, plein d'ardeur, de courage et [illegible], animé de la noble ambition de se [illegible] et de faire œuvre utile, il eut [illegible] pour ses débuts, de servir [illegible] génie qui régnait alors, le Grand [illegible] Roi Mohammed Ali.

Lorsque plus tard, après une existence laborieuse et féconde, l'œuvre maîtresse de sa carrière, la Réforme Judiciaire [illegible], c'est dans cette ville que [illegible] le siège de son [illegible] la plus haute, la Cour Supérieure des Tribunaux [illegible]

[illegible]

C'est pour [illegible] ma reconnaissance à tous ceux [illegible] accordé leur [illegible] à cet hommage rendu à la mémoire de celui [illegible] pour l'Egypte [illegible] je n'ai pas à rappeler [illegible] poussé par ses instincts généreux [illegible] amour pour le fellah [illegible]



Ե.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻ

Վսեմաշուք Տէա՛րք,

Տիկնայք եւ Տէա՛րք.

Երբ, անցեալ դարու կիսուն ատենները, 1842ին, Նա որուն յիշատակը կը համախմբէ զմեզ այսօր՝ Եգիպտոս եկաւ, Աղեքսանդրիոյ մէջ սկսաւ իր փայլուն ասպարէզը։ Գրեթէ դեռ տղայ, նոր աւարտած էր իր ուսումը, եւ հազիւ 17 տարեկան, լի եռանդով, քաջութեամբ եւ ուժով, նշանաւոր ըլլալու եւ օգտակար գործ կատարելու ազնիւ փառասիրութեամբը ոգեւորուած, իբրեւ սկզբնաւորութիւն՝ այն ժամանակ տիրող հանճարեղ մարդուն, մեծ Փոխարքայ Մուհամմէտ Ալիի, ծառայելու փառքը ունեցաւ։

Երբ՝ աւելի վերջը՝ յոգնաջան եւ բազմարդիւն գոյութենէ մը յետոյ, իր ասպարէզին գլխաւոր գործը, դատական բարենորոգումը, մէջտեղ ելաւ, այս քաղաքին մէջ է որ հաստատուեցաւ անոր ամենաբարձր արտայայտութեան կայանը, այսինքն Խառն Դատարաններուն վերին Ատեանը։

Վերջապէս ասկէ քանի մը քայլ անդին է որ, աշխարհիս վրայ իր վեհ գործը ի գլուխ հանելէ յետոյ, յաւիտենական քունով կը ննջէ։

Կը խորհիմ որ այս մտածումները ունեցաւ նաեւ Քաղաքապետութիւնը՝ երբ քաղաքին հրապարակներէն մէկը անոր յիշատակին կանգնուած յիշատակարանի մը նուիրելու ձեռներիցութիւնը ունեցաւ։ Ու բաւական եղաւ որ այդ գաղափարը յայտնուի եւ ահա Եգիպտոսի ամէն կողմերէն եւ նոյն իսկ օտար երկրէ ինքնաբերաբար բազմաթիւ յարումներ տեղի ունեցան այդ խորհուրդին, ինչ որ շատ յուզեց սիրտըս։

Եւ ահա շնորհապարտութիւնս յայտնելու համար ամէն անոնց որ իրենց աջակցութիւնը շնորհեցին յարգանքին որ կը մատուցուի անոր յիշատակին, որուն բովանդակ կեանքը իր երկրին նուիրուեցաւ, որ բանակցեցաւ եւ ձեռք բերաւ Եգիպտոսի համար 1867ի Ֆէրմանը, որուն կարեւորութիւնը հարկ չիկայ յիշեցնելու, որ իր վեհանձնական

V.

REMERCIEMENT

DE

S. E. Boghos Pacha Nubar

Excellences, Mesdames et Messieurs,

Lorsque vers le milieu du siècle dernier, en 1842, celui dont le souvenir nous réunit aujourd'hui, vint en Egypte, c'est à Alexandrie qu'il commença sa brillante carrière. Presqu'un enfant encore, il venait de terminer ses études et n'avait que 17 ans à peine, plein d'ardeur, de courage et d'énergie, animé de la noble ambition de se distinguer et de faire œuvre utile, il eut la gloire pour ses débuts, de servir l'homme de génie qui régnait alors, le Grand Vice-Roi Mohammed Ali.

Lorsque plus tard, après une existence laborieuse et féconde, l'œuvre maîtresse de sa carrière, la Réforme Judiciaire, fut créée, c'est dans cette ville que fut établi le siège de son expression la plus haute, la Cour Suprême des Tribunaux Mixtes.

C'est à quelques pas d'ici, enfin, que sa noble tâche accomplie en ce monde, il repose du sommeil éternel.

J'imagine que ces pensées n'ont pas été étrangères à l'initiative prise par la Municipalité de consacrer une des places de la ville à un monument élevé à sa mémoire. Et il a suffi que l'idée en fût émise, pour que de toutes les parties de l'Egypte, et même de l'Etranger, vinssent en grand nombre des adhésions spontanées, qui me sont allées droit au cœur.

C'est pour exprimer ma reconnaissance à tous ceux qui ont accordé leur concours à cet hommage rendu à la mémoire de celui, dont la vie tout entière fut consacrée à son pays, qui négocia et obtint pour l'Egypte le Firman de 1867, dont je n'ai pas à rappeler l'importance,--qui, poussé par ses instincts généreux et son amour pour le fellah, poursuivit de toute

բնազդումէն եւ ֆէլլահին համար ունեցած սէրէն մղուած՝ իր բովանդակ ուժգնութեամբը հետապնդեցաւ ջնջումին տարապարհակ աշխատութեան, որուն բեռը այնչափ ծանր կուգար ժողովրդին որ յղացաւ վերջապէս դատական բարենորոգման գաղափար եւ իրագործեց զայն անհամար դժուարութեանց յաղթելով. յաղթելով այնպիսի արգելքներու որոնց առջեւ պիտի խորտակուէր իր ոյժէն նուազ հզօրապէս ջրդեղուած որ եւ է ոյժ, — որ՝ այդ մեծ եւ գեղեցիկ գործին յաջողութեամբը՝ պատրաստեց երկրին տնտեսագիտական կերպարանափոխումը՝ որ հիմնուեցաւ ապահովութեան եւ ամենուն համար ալ հաւասար արդարութեան վրայ, — ահա՝ կ'ըսեմ՝ ամեն անոնց որ ո՛ եւ է կերպով այս ցոյցին աջակցեցան՝ շնորհակալ ըլլալու համար է որ ուզեցի խօսք առնել թէ՛ իմ եւ թէ՛ համօրէն իմիններուս կողմանէ ։

Բայց կրնաք հասկնալ որ այս պահուս միտքս կ'երթայ դէպի այն անձը որ մասնակից եղաւ անոր գոյութեան, եւ քանի քանի՛ դժուարին ու փափուկ պարագաներու մէջ բարեպատեհ եւ փրկաւէտ ազդեցութիւն մը ի գործ դրաւ. եւ համոզուած եմ որ ձեր ալ զգացմանց թարգման կ'ըլլամ՝ երբ մեր ցաւը յայտնեմ որ իր առողջութեան վիճակը թոյլ չ'տուաւ իրեն ներկայ գտնուիլ հոս մեր մէջ, իրաւամբ իրեն պատշաճող տեղը ։

Յուզեալ եւ խորապէս երախտապարտ սրտով մեր ամենայարգալից շնորհակալիքը կը յայտնեմ Ն. Բ. Խըտիվին, որ թոյլ տուաւ որ սոյն յիշատակարանը կանգնուի ի յիշատակ անձնուէր ծառային իր բոլոր ազգատոհմին բոլոր Փոխարքաներուն եւ Խտիվներուն՝ սկսեալ Հարստութեան փառաւոր Հիմնադիրէն մինչեւ նոյն ինքն Նորին Բարձրապատուութիւնը, եւ բարեհաճեցաւ իր զգացումները յայտնել սոյն արարողութեան իր կողմէն ներկայացուցիչ ղրկելով ։

Նորին Բարձրապատուութեան Խորհրդոյ Նախագահին եւ Նախարարաց իրենց ինքնաբեր ինքնակամ աջակցութեան համար, մեծայարգ Կարգերէցին եւ դիւանագիտական մարմնոյն անդամներէն անոնց՝ որ զինքը ճանչցած եւ իրեն հետ ունեցած իրենց յարաբերութեանց յիշատակը պահած ըլլալով, ուզեցին ընկերակցիլ սոյն մեծարանաց, Խառն Դատարանի Նախագահին եւ բո-

son énergie l'abolition de la Corvée, dont le poids était si lourd pour le peuple, qui conçut enfin l'idée de la Réforme Judiciaire et la réalisa en surmontant des difficultés sans nombre, et des obstacles devant lesquels se fût brisée toute énergie moins fortement trempée que la siene, — qui par le succès de cette œuvre grande et belle prépara la transformation économique du pays, basée sur la sécurité et la justice égale pour tous, — c'est pour remercier tous ceux qui a un titre qelconque ont contribué à cette manifestation, que j'ai tenu à prendre aujourd'hui la parole, tant en mon nom qu'au nom de tous les miens.

Mais vous comprendrez, qu'en ce moment ma pensée se reporte d'abord vers celle qui partagea son existence et exerça en maintes circonstances difficiles et délicates, une heureuse et salutaire influence; et j'ai la conviction d'être aussi votre interprète en exprimant nos regrets de ce que sa santé ne lui ait pas permis d'être aujourd'hui parmi nous, à la place qui revenait de droit.

C'est d'un cœur ému et profondément reconnaissant que j'exprime nos plus respectueux remerciements à Son Altesse le Khédive, pour avoir permis que ce monuments soit élevé en souvenir du serviteur dévoué de toute sa famille, de tous les Vice-Rois et Khédives depuis le glorieux fondateur de la Dynastie jusqu'à Son Altesse elle-même, et pour avoir daigné témoigner de ses sentiments en se faisant représenter à cette cérémonie.

Au président du Conseil et aux Ministres de Son Altesse, pour leur concours spontané, à l'éminent Doyen et à ceux des membres du Corps Diplomatique, qui l'ayant connu et gardé le souvenir des relations qu'ils avaient eues avec lui, ont voulu s'associer à cet hommage, au Président de la Cour Mixte et aux Magistrats de tous les Tribunaux, qui ont tenu à y contribuer avec une

լոր դատարանաց դատաւորներուն որ փափաքեցան անոր նպաստել սրտագրաւ համաձայնութեամբ, Քաղաքապետութեան եւ Քաղաքին, որոնց ներկայացուցիչն է Աղէքսանդրիոյ Կառավարիչը, իրենց վեհանձն ձեռներիցութեան համար, ամեն անոնց որ, իրենց խօսքով կամ ներկայութեամբ, եկան սոյն հանդիսին փայլը աւելցնել, յիշատակարանին Յանձնաժողովին եւ՝ ի մասնաւորի՝ անոր Նախագահին, Գանձապետին եւ Ատենադպիրին որ ոչ ժամանակնին եւ ոչ աշխատութիւննին չ'խնայեցին՝ իրենց ստանձնած գործին յաջողութեանը համար, այն մեծ արուեստագէտին որ, ինծի համար հոգեխռով ճշդութեամբ մը, ինձ անձկալի դիմագծեր վերակենդանացուց, ամեն անոնց, մինչեւ տրուպ ֆէլլահին անգամ, որ մօտէն կամ հեռուէն հօրս յիշատակին մատուցուած սոյն մեծարանքին մասնակցեցան, կ'ըսեմ. շնորհակալ եմ ։

Պիտի ներէք ինձ որ անուններ չ'եմ յիշատակեր. չափազանց շատ կայ ։ Բայց անոնց ամենքն ալ խորապէս դրոշմուած են յիշողութեանս մէջ եւ կը ծնուցանէ իմ մէջս յուզուած շնորհապարտութեան զգացում մը, որ բնաւ չ'պիտի ջնջուի ։

ՎԵՐՋ

touchante unanimité, à la Municipalité et à la Ville, représentées par le Gouverneur d'Alexandrie, pour leur généreuse initiative, à tous ceux qui, par leur parole ou leur présence, sont venus rehausser l'éclat de cette inaugurations, au Comité du Monument, et en particulier à son Président, au Trésorier et au Secrétaire qui n'on ménagé ni leur temps, ni leurs peines pour le succès de la tâche qu'ils avaient assumée, au grand artiste qui a fait revivre, avec une vérité troublante pour moi, des traits qui me tiennent au cœur, — à tous ceux jusqu'a l'humble fellah, qui de loin ou de près ont pris part à cette hommage rendu à la mémoire de mon père, je dis: Merci.

Vous m'excuserez de ne pas citer de noms; j'en aurais trop à citer. Mais il n'en est pas un seul qui ne soit profondément gravé dans ma mémoire, et n'ait fait naître en moi un sentiment de gratitude émue, que jamais ne s'effacera.

FIN

ՀՀ Ազգային գրադարան
NL0418556

ԶԵԿՈՅՑ

Ներկայ «Յիշատակարան»ի առաջին տպագրութեան վաճառման բոլոր հասոյթը՝ Եղիշէ Թոռնեանի կողմէ Գահիրէի «Հայկական Աղքատախնամ Ընկերութեան» նուիրուած ըլլալով. իւրաքանչիւր օրինակ նոյն Ընկերութեան կնիքը պէտք է որ կրէ։

SOC. DE BIENFAISANCE ARMÉNIENNE DU CAIRE 1904

Երկրորդ եւ ուրիշ տպագրութեանց ամէն իրաւունք գործոյս հեղինակին վերապահեալ է։

5v

gm

8245